

**Ըստ հանրաքվեի կենտրոնական հանձնաժողովի հրապարակած նախնական արդյունքների՝ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող 2.567.047 քաղաքացիներից դեկտեմբերի 6-ի քվեարկությանը մասնակցել է 1.303.466 հոգի, որից՝ «Այո»-ի օգտին քվեարկել է 825.851-ը, «Ոչ»-ի օգտին՝ 421.600-ը:**

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻԶ «ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ»  
ՍԱՀՄԱՆԱԾՎԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**ՏՊԱԳՐՎՈՒՄ Է  
2003<sup>թ.</sup>  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ**

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան,  
Շահումյան 20/32, 3301:  
Հեռ.՝ (+374 285) 5 25 63  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:  
Տպագրվում է «Տիգրան Մեծ»  
հրատարակչության տպարանում:  
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:  
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:  
Տպաքանակը՝ 1700: **Գինը՝ 100 դրամ**



**Պատմության  
ֆառուղիներով  
(հասված)**

*...Եվ այսպես-դասմության ֆառուղիներով  
Անցել ենք մենք անդեկ ու անգաղափար,  
Շառագունված անվերջ ուրիշների հրով,  
Եվ մեր ճանադարի անփայլ  
Եղել է ճանադարի ունայնության, մահի -  
Եվ չէ՛նք կարող այսօր ձեզ մեծարել  
Օ, նախնիներ՝ մեր խեղճ, առաջնորդներ՝ մեր  
հին, -  
Մեր դասմություն անդեմ ու անհամարեղ...  
Ահավասիկ էլած ձեր աներսզ քնից  
Եզովում ենք մենք ձեր եղկությունը մթաթ -  
Օ՞, կերտողներ՝ շնչին մեր անհամար հնի  
Եվ հերսներ՝ անմահաբար մեր դասմության...  
Ստորակի վրա այս խայսաբղես,  
Աշխարհի սկզբից մինչև վախճանե  
Երեւի առաջին ժողովուրդն ենք մենք,  
Որ կամենանք անգամ - դավաճանել  
Անկարող ենք փառին մեր ու դասմության  
անցած,  
Ու կանգնած ենք ահա աղաքայի հանդեպ  
Չարմանալի՞ թեթեւ, զարմանալի՞ անդեմ՝  
Մերկության դէս սկյոր ու անանցյալ...  
Այդ մե՛նք ենք երեւի այն ողբս հասակողդ,  
Որ Հիսուսի առակին հակառակ -  
Պիտի մենքն՝ անգամ ասեղի նորս ծակով՝  
Աղաքայի դրախտ անարտ...  
Այդ մե՛նք ենք երեւի այն հարսուսե,  
Որ անցյալի մեր այդ սկյորությամբ հարուս -  
Պիտի ժառանգենք մեր դարերի կորուսե,  
Որ բոլոր՝ սկյորներին սահմանված է վերսուս...  
ԵԴԻՇԵ ՉՍՐԵՆՑ*

# Սյունյաց Երկիր

ՀԻՆՊԵՏԱԲԹԻ, 10 ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 2015Թ.  
№ 33 (375)

www.syuniacyerkir.am

## Հանրաքվե

ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի ընթացքում, որ տեղի ունեցավ 2015թ. դեկտեմբերի 6-ին, Սյունիքի մարզում գործում էր 153 ընտրական տեղամաս:

Մարզում քվեարկելու իրավունք ունեն 109454 քաղաքացի:

Քվեարկությանը մասնակցեց 66916 հոգի կամ քվեարկության իրավունք ունեցողների 61,14 %-ը:

2138 քվեաթերթիկ համարվեց անվավեր: «Այո»-ի օգտին քվեարկեց 47926 (71,62 %), «Ոչ»-ի օգտին՝ 16815 (25,13 %) հոգի:

«Այո»-ն հատկապես մեծ աջակցություն ստացավ Քաջարան եւ Ագարակ քաղաքներում (երկու համայնքում էլ՝ 84 %): Քաղաքային այդ համայնքներում մասնակցությունն էլ ակտիվ էր՝ Քաջարանում՝ 84 %, Ագարակում՝ 81,4 %:

«Այո»-ն պատշաճ աջակցություն ստացավ նաեւ Գորիս քաղաքում (72,3 %), Մեղրի քաղաքում (68 %), Սիսիան քաղաքում (58 %) եւ մարզի բազմաթիվ գյուղական համայնքներում:

«Ոչ»-ն առավել մեծ հաջողություն գրանցեց Կապանում: Մարզկենտրոնում բացված 21 ընտրատեղամասից 9-ում բացարձակ հաղթանակ գրանցեց «Ոչ»-ը:

Կապանի 30920 ընտրողից քվեարկությանը մասնակցեց 16126 (52,2 %) ընտրող:

«Այո» քվեարկած քվեաթերթիկների թիվը՝ 8613 (53,4 %), «Ոչ» քվեարկած քվեաթերթիկների թիվը՝ 6960 (43,2 %), անվավեր է համարվել 553 (3,4 %) քվեաթերթիկ:

ՀՀ սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի նախապատրաստության եւ անցկացման ամբողջ ընթացքը, անշուշտ, խո-



## Սյունիքը քվեարկեց «Այո»-ի օգտին, իսկ Կապանում, այնուամենայնիվ, մրաձեւուբան կա

րը վերլուծության կարիք ունի, եթե, իհարկե, ուզում ենք անկեղծորեն վերլուծել: Սահմանադրության ներկայիս փոփոխությունը դեռեւս քննարկվելու է երկար ժամանակ: Մինչ այդ, սակայն, հարկ ենք համարում մի քանի նկա-

տառում հայտնել համապետական այդ իրադարձության սյունիքյան որոշ դրսեւորումների առնչությամբ:

էջ 2

## Սիսիանը հրաժեշտ արեց մարտական դիրքում գոհված իր զավակին

«Աղբբեջանական դիվերսիոն խումբը հետ է մղվել. հայկական կողմն ունի մեկ զոհ», - նման վերնագրով լրատվամիջոցները հաղորդագրություն տարածեցին այն մասին, որ դեկտեմբերի 4-ի

ժամը 04:30-ի սահմաններում դարաբաղադրբեջանական հակամարտ գործերի շփման գծում հակառակորդ ձեռնարկել է հետախուզադիվերսիոն ներթափանցման հերթական փորձը՝ Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի մի քանի ուղղություններով: Պաշտպանության բանակի առաջապահ ստորաբաժանումները ժամանակին կանխել են աղբբեջանական հատուկ ջոկատայինների առաջխաղացումը եւ կորուստներ պատճառելով՝ հետ շարտել էլման դիրքերը:

Ցավոք, ծավալված մարտերի ընթացքում մահացու հրազենային վիրավորում է ստացել պաշտպանության բանակի զինծառայող, 1995 թվականին ծնված **Երկ Էդիկի Գրիգորյանը**, ով Սիսիանի տարածաշրջանի Շաքե գյուղից էր: Ինչպես մեզ տեղեկացրեց Շաքեի գյուղապետ Վահան Ղազարյանը, նա մի քանի օրից պիտի գորացվեր, ընտանիքը սպասում



էջ 3

## Քայլ դեպի համընդհանուր ներառական կրթություն

### ԼԻԼԻԹ ԲԱԲԱՅԱՆ

Կրթության ազգային ինստիտուտի Կապանի մասնաճյուղի գլխավոր մասնագետ

Ըստ 2014թ. դեկտեմբերի 1-ի ԱԺ-ի «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին օրենքի 4-րդ հոդվածի 2.1-ին մասի՝ «Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիությանը, հավասար մասնակցության հնարավորությանը եւ որակի ապահովմանը»: Ըստ սույն օրենքի՝ մինչեւ 2025 թվականի օգոստոսի 1-ը Հայաստանի Հանրապետությունում ներդրվում է համընդհանուր ներառական կրթության համակարգը:

Հանրակրթության ոլորտում ներառական կրթության իրականացման նախաձեռնությունը սկսվել է 2001թվականից՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարարության եւ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջեւ ստորագրված փոխընթերցման հուշագրի հիման վրա: 2005 թվականին, «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, ներառական կրթությունը դարձավ

էջ 5

# ԳՐՈՂԸ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

## ԽԱՆՁԱԳՈՂՆԵՐԻ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Լրացավ հայ գեղարվեստական արձակի արժանավորագույն դեմքերից մեկի՝ Սերո Խանգադյանի ծննդյան 100-ամյակը, գրող, որ բարձրադիր ու մնայուն տեղ նվաճեց հայ գրականության մեջ՝ գրողի, մտավորականի ու ազգային գործչի ամբողջական վաստակով:



տական դրամատիկական թատրոնի շենքային մոր համալիրի բացման հանդիսության ժամանակ):

Ս.Խանգադյանը ոչ միայն հայ ժողովրդի հոգեմտավոր արժեքների ու ավանդների պահպանող գրողը եղավ, այլև հայ հանրային միտքը ժամանակի կշռույթին զուգահեռ վերանորոգելու շարժումին հավատարմագրված խոհուն մտավորականն ու հրապարակագիրը, ժամանակին համահունչ առաջ ընթանալու հայ ազգային ուժակազմության գաղափարախոսը:

Ուշագրավ են Խանգադյանի գաղափարական զարգացման ուղին, ժամանակի հրատապ խնդիրներին արձագանքելու, ուղիներ մատնանշելու նրա գրողական սրատեսությունն ու խիզախությունը, գրական ու հասարակական մտահոգությունները, որոնք արտահայտվել են մամուլի տարբեր հրապարակումներում, բաց նամակներում ու հարցազրույցներում:

Չատկապես Արցախյան շարժման բռնկման հետ սպառեզ կեանքի հայ մտավորականների փառանքի

մեջ Սերո Խանգադյանը ջերմեռանդ ու գլխավոր դրոշակակիրներից մեկն էր: Պատահական չէ, որ շարժման առաջին իսկ օրերից Խանգադյանն իր գրական ու հրապարակախոսական հարուստ պաշարն ի սպաս դրեց պատմական արդարությունը վերականգնելու երախտաշատ գործին:

Խանգադյանը շատ բան է տվել երկրին, ժողովրդին ոչ միայն իբրև գրող, այլև քաղաքացի՝ օժտված քաղաքացիական բարձր գիտակցությամբ ու պայքարի ջիղով: Հատկանշական էր, որոնք խարսխված են մարդկայնության, բարոյականության անխախտելի հիմքի վրա:

Երկու միտերից բաղկացած նստաշրջանին ներկայացվեց ութ զեկուցում, որոնց հեղինակներն արխիվային բացառիկ նյութերի, գրողի կենսագրության քիչ հայտնի մանրամասներին ուսումնասիրման արդյունքում փորձեցին արժեւորել Խանգադյանի տեղն ու դերն իր ու իր ժամանակի բազմաձև հարաբերու-

էջ 5

# Կա եւ հեղինակու կյանք

## Արհուրյան դաս

Սուրեն Այվազյան արձակագիրն ու մարդը 2015 թվականին դարձավ 100 տարեկան եւ տարիների հեռավոր նայեց աշխարհին: Այն աշխարհին, որի ծնունդն է ինքը եւ որը կյանքից առավել էր սիրուն: Այդ աշխարհը Հայաստանն է, Հայաստանում՝ Ջանգեզուրը, Ջանգեզուրում՝ Գորիսը, Գորիսում՝ Խնձորեսկը...

Մեծատաղանդ Սուրեն Այվազյանը Ջանգեզուր աշխարհի մեծություններից է: Հարուստ ու հին պատմություն ունեցող Խնձորեսկը նրան ծնել է տվել է այն հողը, որի շնորհիվ Այվազյանը ծաղկավել, սաղարթախիտ ծառ է դարձել:

Հայաստանը... Դեռևս Սուրեն Այվազյան գրողն ու մարդու բացառիկ տեսակն ըստ արժանվույն գնահատված չէ Հայաստանի մասշտաբով: Գնահատված չեն նրա ստեղծագործությունները, որոնք մանրամասնաբար աշխատանք են հիշեցնում: Նրա ստեղծագործություններում հանդես եկող կերպարները, նրանց բնավորություններն այնպես մանրակրկիտ են տեսանելի են պատկերված, որ ասես ասեղնագործություն լինեն:



գունագեղ, ակնհաճ ու տպավորիչ:

Մինչ Այվազյանը հանրապետական մակարդակով հայ մեծանուն գրողների շարքը կդասվի եւ հայ գրականության մեջ կզբաղեցնի իր արժանի տեղը (հուսամ, որ դա կլինի), Ջանգեզուր-Սյունիք- Խնձորեսկն իր տաղանդավոր գավալի կողքին է: Խնձորեսկը երբեք անտարբեր չի եղել իր ծնած եւ ոչ մի արվեստագետի, գրողի, բանաստեղծի նկատմամբ: Խնձորեսկի դպրոցն է՝ ի դեմ կրթօջախի տնօրեն Վալենտինա Բալայանի, առանձնահատուկ ջերմությամբ է լցված խնձորեսկի արժանավոր մարդկանց համոզեալ: Սուրեն Այվազյանն այդ արժանավորներից է...

Խնձորեսկի Գ.Սեւունցի անվան միջնակարգ դպրոցում 2015 թվականը հայտարարվեց այվազյանական: Դպրոցում կազմակերպվեցին այվազյանական ընթերցումներ, դաս-միջոցառումներ, բաց դասեր՝ անմիջապես Սուրեն Այվազյանի շիրմաքարի մոտ: Պատրաստվեցին վահանակներ, պաստառներ:

Նաեւ անց է կացվել «Մեր Այվազյանը» վերնագրով շարադրությունների մրցույթ: Ամփոփվել են արդյունքները, եւ լավագույնն են ճանաչվել 9-րդ դասարանի աշակերտ Վարդգառ Բաղդազյույանի, 10-րդ դասարանի աշակերտուհի Մանուշակ Շահնազարյանի եւ դպրոցի նախկին սան

Աստղիկ Բաբալարյանի շարադրությունները, որի համար հեղինակները տնօրենի կողմից արժանացել են մրցանակի՝ խրախուսվելով Սյունիքի գրողների միության նախագահ Արկադի Ծատուրյանի «Մեր Այվազյանը» գրքով:

Այդ ամենի հանրագումարը եղավ դպրոցի կյանքում արդեն ավանդույթ դարձած ամենամյա հերթական արհուրյան դասը՝ «Կա եւ հեղինակու կյանք» խորագրով, որը նվիրված էր Խնձորեսկի երախտավոր, արձակագիր Սուրեն Այվազյանին:

Նոյեմբերի 2-ին Խնձորեսկի միջնակարգ դպրոցն իր տաքուկ գիրկն էր բացել Սուրեն Այվազյանի եւ նրա երկրպագուների համար: Մի՞թե Խնձորեսկցին կարող է չզննահատել իր գավալին, իր այն գավալին, որի «ապրելը չապրել է եղել, ով չարության միջից ծնված բարությունն է», եւ ուն պահանջը մարդկանցից միայն այն էր, որ թողնեն՝ ինքը միշտ բարի մնա...

Միջոցառումն աշակերտները սկսեցին հայրենիքից. «Երեւի մարդ մի ամբողջ կյանք պիտի ապրի, որ հասկանա, թե ինչ է հայրենիքը... Ինչպիսի հզոր զգացումն էլ ունենա մարդը, մինչև ուն է, ամենամաքուր ու ամենամանկեղծ զգացումն ունենում է իր ծննդավայրում»: Իրոք, Այվազյանի ստեղծագործությունները հասկանալու համար պետք է ծանաչել նրա հայրենիքը՝ Խնձորեսկը: Աշակերտներն անդրադարձան Այվազյանի այն ստեղծագործություններին, որոնցում Խնձորեսկի (հատկապես Հին Խնձորեսկ) ամեն մի անկյուն, ամեն քար ու թուփ

# Սյունիքը քվեարկեց «Այո»-ի օգտին, իսկ Կապանում, այնուամենայնիվ, մրաձեւու բան կա

Եջ 1 Կապան քաղաքի արդյունքները վերստին հաստատեցին, որ իշխանությունները, մեղմ ասած, Կապանում խնդիր ունեն, նաեւ մտածելու բան:

Մի ուրիշ դիտարկում էլ. Կապանում կործանվեցին ԳՀԿ-ի եւ ՀԳԻ-ի խոշոր կազմակերպությունները: Եվ երկու այդ խոշոր կազմակերպությունը (իբր մեկտեղված ջանքերով) չկարողացան ցանկալի արդյունք արձանագրել մարզկենտրոնում: Ստեղծված իրավիճակն առնվազն երկու պատճառ կարող է ունենալ: Նախ՝ այդ կուսակցություններից առնվազն մեկը չի աշխատել «Այո»-ի օգտին կամ երկուսն էլ վատ են աշխատել: Այնուհետեւ՝ այդ կուսակցությունները, ըստ էության, ավելին չէին էլ կարող անել. այդքան էր նրանց ներուժը:

Ուրիշ պատճառ էլ կար. «Այո»-ի շտաբը, կարելի է ասել, կավե ոտքերով մի կառույց էր՝ կապանյան իրականությունից կտրված, մի քանի տեղական պաշտոնյայի անհոգաբաշխ գեկույցներից գլխավորությամբ մեջ ընկած, հանրային տրամադրություններին անհաղորդ:

Ընդհանրապես նախկին շրջանների տարածքն ընդգրկող նմանատիպ շտաբները, ինչպես կյանքն է ցույց տալիս, մեծագույն ավելորդություն են անհեթեթություն են ընտրական գործընթացներում: Դրանց գործունեությունն ավելի շատ խաղի տպավորություն է թողնում՝ բեմից դուրս խաղի տպավորություն:

Գունարած անտաղանդ դերասաններ եւ անճաշակ կատարումներ: Նրանց վերագրվող ֆունկցիան կարող է եւ մեկ-երկու՝ միջին կարողությամբ անձնավորություն կատարել: Իրական ուժերը պետք է կենտրոնացնել տեղամասերում, որտեղ մարդկանց հետ կենդանի աշխատանք է պահանջվում: Իսկ ոմանք գերադասեցին խաղալ...

Ինչո՞ւ ենք վերջին հանգամանքը կարեւորում: Քվեարկության նախնական արդյունքները ցույց են տալիս, որ մարզկենտրոնի մի շարք տեղամասերում ապահովվել է ընտրողների եւ ակտիվ մասնակցություն, եւ պատշաճ «Այո»: Ուրեմն աշխատանքն է պակասել:

Իսկ Կապանում... Իշխանություններն առաջին անգամ չէ, որ բախվում են նման դիմադրության. հիշենք թեկուզեւ 2012թ. նախագահական եւ ՏԻՄ ընտրությունները:

Բայց դրանից չպետք է հուսահատվել: Այդ ամենի մեջ ավելի շատ դրական երանգ կա: Որտեղ անգամ կապանյան քվեարկությունը ցույց է տալիս, որ մարզկենտրոնում եղել է ու կա ազատ կամարտահայտության անվիճելի ու անբեկանելի մթնոլորտ: Դրանով միայն պետք է ուրախանալ: Դրանից պետք է նաեւ դասեր քաղել...

Մի դատապարտելի երեւույթ կա (եւ ոչ միայն Կապանում), որ տարիներ շարունակ ուղեկցում է մեզ գրեթե բոլոր ընտրությունների ժամանակ: Ընտրությունները, հանրաքվեները,

կարծեք, բացառիկ լավ հնարավորություն են ընձեռում պետական շահերով սեփական դեմքը թաքցնած որոշ մարդկանց՝ ցեխտեղու անձնական հակառակորդներին, իրենց համար անցանկալի անձանց: Այս անգամ էլ այդպես եղավ: Հաճախ այնպիսի տպավորություն էինք տեղեկում ստանում, որ խնդիրը ոչ թե հանրաքվեի արդյունավետ կազմակերպումն է, այլ ինչ-որ մարդկանց վարկաբեկելը: Եվ այդ «հնարքն» ամբողջ ուժով աշխատում էր ընդդեմ «Այո»-ի, ընդդեմ հանրության համախմբման:

Կամ՝ այդպես էլ չհասկացանք, թե ինչու գործող իշխանությունների հովանու ներքո մեր երկրամասը երկն թալանած եւ այսօր սասպատակող հայտնի պերսոնաժները բառ անգամ չասացին նույն այդ իշխանությունների կողմից առաջարկված սահմանադրական բարեփոխումների օգտին:

Ապշեցուցիչ էր հայտնի կուսակցության սյունիքյան մարաթոնը... Առաջարկվող փոփոխությունների լավն ու վատը ներկայացնելու, անհասկանալի եւ երկիմաստ հարցերը վերծանելու փոխարեն փորձում էր իր ճաղատ գլխին դնել համապետական այդ միջոցառման նախաձեռնողի «դափնին»:

Եվ, այդ բոլորով հանդերձ, Սյունիքն «Այո» ասաց սահմանադրության փոփոխություններին՝ իրեն պատասխանատու համարելով երկրի ներկայի ու ապագայի համար:

ԱՍՏԿԵՆ ԱՆԵՔՍԱՆՅԱՆ

Որքի թշվառ ճակատագրով մեծանում է ապագա արձակա-

# Հուշադրյուր-կոթող՝ Նվիրված Արցախյան հերոսամարտում զոհված Նորավանցիների հիշատակին

**Սիսիանի տարածաշրջանի Նորավանցի համայնքը նույնպես 25-ին տոնակա և հաղթական նոտաներով ու շեշտադրումներով էր համակվել: Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանի օրհնությամբ բացվեց Արցախյան հերոսամարտում զոհված նորավանցիների հիշատակին կանգնեցված հուշադրյուր-կոթողը:**

Իր երեք զավակներին միայնակ մեծացրած, զոհված ազատամարտիկ Մանվել Դուրխանյանի այրին՝ Դշխուն Քանանյանը, հուզմունքով է Աշտարակից Նորավանցի գյուղ հասել: Հուշադրյուր-կոթողը նաև իր ամուսնու անունն է փոխանցելու սերունդներին: «Մենք Նորավանցում ապրել ենք մի քանի տարի, - հիշում է տիկին Դշխունը: - Աշտարակից են. ամուսնացել-եկել են Նորավանց, հետո մորից տեղափոխվել ենք Աշտարակ: Մանվելը երկրպագի կամավորական ջոկատին միացավ 1992թ.-ին և զոհվեց Մարտակերտում 1994-ին: Ասում էր՝ չգնալ չեմ կարող: Եթե գնամ, համագիստ կլինեմ, որ իմ ընտանիքը, ազգը հանգիստ կքնի: Ինքը շատ հայրենասեր էր, դա է վկայում այն փաստը, որ նրա մեծ որդին էս պահին սահմաններն է պահում»:

Արցախյան ազատամարտի տարիներին Նորավանցից հայրենի

սահմանների պաշտպանությանն ու ազատագրմանն էին միացել 25 քաղաքացիներ: Հարազատ օջախներ չվերադարձան նրանցից 6-ը՝ Գուրգեն Առաքելյանը, Ալբերտ Ազարյանը, Գրիգոր Բաղդասարյանը, Սպարտակ Ե. Կամո Հակոբջանյանները, Մանվել Դուրխանյանը: Այդ տարիներին ազերիների կողմից կազմակերպված անասնազոհության ժամանակ սպանվեց նաև խաղաղ բնակիչ Հրաչիկ Հակոբյանը:

«Որդիս ծնվել է Նորավանցում, զոհվել Հորադիրում: 20 տարեկան էր, ժամկետային զինծառայող, ընդամենն ութ ամիս էր ծառայել... Շատ ուժեղ, սիրուն, շատ խելոք ու հայրենասեր տղա էր իմ տղան, - արցունքները զսպելով՝ պատմում է Աննա Բաղդասարյանը՝ զոհված ազատամարտիկ Գրիգոր Բաղդասարյանի մայրը: - Սակայն էս հպարտ եմ, որ զավակս կյանքը նվիրել է հայրենիքին: Ուրախ եմ, որ չեմ մոռացել մեր զավակներին. նրանք անզավակ էին, չամուսնացած դեռ...»:

Հուշադրյուր-կոթողը կառուցելու նախաձեռնությունը համայնքի ղեկավար Սլավիկ Պապյանին է: Աջակցել է ողջ համայնքը՝ ով ինչով կարողացել է: Հուշարձանն իր հաղթական արձանով, կիսատ կյանքերը խորհրդանշող կիսակամարներով ու հզոր արծվով զոհվածների հիշատակը հավերժացնելուց զատ նաև սերունդներին միշտ զգոն պահելու



խորհուրդ ունի: «Էսօր մատաղ սերունդը պիտի տեսնի այն հարգանքը, ուշադրությունը, մեծարանքը, որ կա ժողովրդի մեջ զոհվածների նկատմամբ, ովքեր իրենց կյանքը նվիրաբերեցին մեր երկրի համար», - նշեց համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարին ու բնակչությանն իր շնորհակալությունը հայտնեց Արցախյան ազատամարտի հրամանատար Աշոտ Մինասյանը, այնուհետև մարզպետ Սուրբիկ Խաչատրյանն ուշադրություն հրավիրեց

գյուղի համար հրատապ խնդիրներին. յուրաքանչյուր գյուղ շեն է իր զավակներով, իսկ Նորավանց մասնակապարտեզ չունի, ճանապարհն անմխիթար վիճակում է: «Արցախյան հերոսամարտը հայոց ազգի ողնաշարը շտկեց, - իր խոսքում նշեց Սյունիքի մարզպետ Սուրբիկ Խաչատրյանը, - Արցախյան հերոսամարտը մեզ էլ ավելի ճանաչելի դարձրեց աշխարհում, Արցախյան հերոսամարտը մեզ տվեց մի նոր պատմություն, մենք

կարողացանք պատմության անիվը շրջել: Այսուհետ այստեղով անցնելիս բոլորս հնարավորություն ունենք խոնարհվելու մեր հերոսների առջեւ»:

Չորրորդ բանակային կորպուսի հրամանատար Անդրանիկ Մակարյանը թվարկեց այն պատճառները, որոնք թույլ չտվեցին քանակապես և տեխնիկապես մեզ գերազանցող թշնամուն հաղթանակ տոնել: Դրանք են՝ մեր ազգասիրությունը, պետականության արժեւորումը, քրիստոնեական հավատքը, գիտակցումը, որ Հայաստան աշխարհը չի սահմանափակվում այսօրվա մեր վարչական սահմաններով: «Մենք ազգովին պետք է լինենք պատրաստ և այսօրվա, և առաջիկա մեր բոլոր պայքարներում, բայց եթե չի իշխեց մեր զոհված ազատամարտիկներին, մեր կենդանի ազատամարտիկներին, ովքեր այսօր մեր կողքին ու մեր շարքում են, մենք ապագայի մասին մտածել չենք կարող»:

Իրենց համագյուղացի զոհվածների անցած ճանապարհը ներկայացրին Նորավանցի դպրոցի աշակերտները և խոստացան լինել նրանց արժանի հետնորդները:

**ԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

գիրը, խնձորեսկի տավարած Բախշու և արեգունաշենցի Բոխշու որդին դառնում է ուսուցիչ, հետո դառնում համալսարանական... Վերավերվում է Հայրենական մեծ պատերազմում...

Ասուրի դերը ստանձնած աշակերտի բերանով հանդիսատեսը լսեց խարկոփի հոսպիտալում հայտնված վիրավոր Այվազյանի նամակը՝ ուղղված իր համար ամենասուրբ էակին. «Մայր, Աստված լսեց քո ծայրը և ինձ կենդանի թողեց, որ դու էլ ապրես ինձ համար: ...Հիշում եմ քեզ, մայր, հիշում եմ մեր գյուղը, եմ քթիցս ծուխ է դուրս գալիս... Շուտով կգամ, մայր, քեզ ու իմ ամպոտ հրաշքները տեսնելու, կգամ ընդմիշտ ձուկվելու իմ մանկության ծորերին, կգամ մեր քարափի քարերը համբուրելու, սրտիս մեջ ամբարված կարոտներիս հետ զրուցելու...»:

Եվ եկավ... 100 տարի անց եկավ և ձուկվեց իր մանկության ծորերին, զրուցեց իր սրտի մեջ ամբարված կարոտների հետ և իր կարոտները պատմեց բոլորիս... Միջոցառման սկզբից մինչև վերջ կարծիր թելի պես անցավ կարոտը, տառապանք - կարոտը... Իշխեց բոլորի սրտերին և արցունքներ քսմեց շատերի աչքերից...

Այվազյանի ծննդյան 100-ամյակին նրա «հյուրը» էին գույների վարպետ Հենրիկ Սիրավյանը,

խոսքի արքա Ալսեյ Բակունցը, հայ երգի թագուհի Տաթևիկ Սազանդարյանը, Սաթյան եղբայրները, Համո Սահյանը, Գարեգին Սեւունցը, Գուսան Աշոտը, Սերո Խանգաղյանը... Նրանք հավաքվել էին Սյունյաց աշխարհի այդ գողտրիկ անկյունում՝ խորածորում, որպեսզի ոչ միայն տոնեն Այվազյանի ծնունդը, այլ նաև իրար հետ կիսեն իրենց մտքերն ու կարոտները, զրուցեն, արտասանեն, երգեն...

Միջոցառման ընթացքում հանդիսատեսը վայելեց նաև խնձորեսկիցի Վաչե Մանվելյանի ախորժելի երգերը:

Ս.Այվազյանը թողեց հանդիսատեսին և գնաց «շուտ հեռացողի դանդաղ քայլերով»՝ մեկ անգամ Ես հիշեցնելով «լինել ավելի բարի և ամեն օր մի կտոր բարություն նվիրել աշխարհին» և հղեց իր պատգամը.

- Միշտ բարի մնաք, բարի մարդիկ:

Արիության դասին ելույթ ունեցան բանասիրական գիտությունների դոկտոր Շչիրո Դավթյանը, Հայաստանի գրողների միության Սյունիքի մասնաճյուղի նախագահ Արկադի Ծատուրյանը:

Դասն ամփոփեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը:

**ԱՐՄԵՆՈՒԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԽՆՁՈՐԵՍԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴԱՊՐՈՑԻ ՀԱՅՐՈՑ ԼԵՉՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՍՏՈՒՆՈՒԹՅԱՆ**

## Սիսիանը հրաժեշտ տվեց մարտական դիրքում զոհված իր զավակին

Եջ 1 էր վերադարձին: «Երկիրը բազմամղում ընտանիքից էր՝ հինգ երեխա՝ չորս որդի, մեկ կուրսոր, համեստ, աշխատավոր ընտանիքից էր, գյուղացիական տնտեսություն էին վարում, նոր-նոր սկսել էին ոտքի կանգնել: Հայրն ուր տարի առաջ էր մահացել, ընտանիքի հոգսը մնացել էր մոր ուսերին», - փոխանցեց համայնքապետ Վահան Ղազարյանը: Ի դեպ, Արցախյան հակամարտության ժամանակ զոհվել են Երիկի քեռին և նորաբրոջ որդին:

Երիկի աճյունը հայրենի գյուղ է ուղեկցել Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի 10-րդ լեռնահրաձգային դիվիզիայի հրամանատարի՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, զննարկատ Կրեժ Իշխանյանը: Նրա հավաստմամբ՝ Երիկ Գրիգորյանը հրամանատարության կողմից բնութագրվում է դրականորեն, մարտական հերթապահության ժամանակ հանդես էր բե-

րում նախաձեռնողականություն և աշխուժություն, ուներ ֆիզիկական բարձր պատրաստականություն, մի անգամ հակառակորդի զննարկոծությունից հրազենային վիրավորում էր ստացել: Ապաքինվելուց հետո խնդրել էր իրեն տանել առաջին գիծ վերադարձել էր մարտական հերթապահության, մարտական դիրքեր: Նախկինում պարզեցատրվել էր ՀՀ պաշտպանության նախարարության «Ծովակալ Իսակով» մեդալով:

Զոհված զինծառայողը ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով Արցախի սահմանները պաշտպանելիս ցուցաբերած արիության համար հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Երկրպագի կամավորականների միության Սիսիանի մասնաճյուղի խորհուրդը, նկատի ունենալով այն, որ Երիկ Գրիգորյանը մարտական դիրքում է զոհվել, որոշում է ընդունել նրան հողին հանձնել Արցախյան

գյուղամարտում ընկած սիսիանցիների վերջին հանգրվան Պանթեոնում:

Սիսիանցիները, շաբեցիները, գյուղի կրթօջախի անկախարժան կուլեկտիվն ու դպրոցականները դեկտեմբերի 7-ին անամոք վշտով հուղարկավորեցին նահատակ զինվորին: Համագյուղացիների անունից խոսք է ասել գյուղի կրթօջախի ֆիզիկայի ուսուցիչ Ասատուր Մանուկյանը, ով արդեն կենսաթոշակի է անցել, բայց մոտիկից գիտեր Երիկ Գրիգորյանին: Նա Երիկին ներկայացրեց որպես խելացի, նվիրված, աշխատասեր, կենսուրախ երիտասարդի: Մարտական ընկերներին պատմել էր, որ զորացրվելուց հետո արտագնա աշխատանքի է գնալու՝ թեթևացնելու ընտանիքի հոգսը:

Լրատվամիջոցները նաև հայտնում են, որ ՀՀ քննչական կոմիտեն սույն դեպքի առթիվ հաղորդագրություն է տարածել՝ մասնավորապես նշելով, որ հակառակորդի կողմից հայ զինծառայողի սպանության դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական շարժառիթներով, կազմակերպված խմբի կողմից, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով սպանություն կատարելու փաստի առթիվ:

**ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

Ինչդեռ է դա եղել

# Կորուսյալ հերոսը

**Խորհրդային Միության հերոսների ցանկում, որոնց սխրանքը կապված է Գոմելի շրջանի հետ, այդ մարդու անունը նախկինում չէր հիշատակվում: Այնպես էին դասավորվել պատերազմի հանգամանքները, որ իր վերջին թռիչքը կատարելով բելառուսական Լոնից, կապիտան Սամսոն Մկրտումյանն իր ինքնաթիռը իջեցրեց ուկրաինական Նովոնիկոլաեկա ավանում:**

### Երկինքը Դնեպրի վրա

1943 թվական: Լոն: Երկու շաբաթ առաջ Դնեպրի ջուրը եռում էր զնդակներից եւ արկերից, իսկ բարձրադիր աջ ափին դաժանագույն մարտեր էին ծավալվել: Այդ հատվածում Բելառուսական ռազմաճակատի զորքերը հանկարծակի առաջ նետումով անցան Դնեպրը եւ հարթահարելով թշնամու համառ դիմադրությունը, սկսեցին գրոհը զարգացնել դեպի Ռեչիցա եւ Գոմել: Գետանցման վրա օդային տարածությունը պահպանում էին խորհրդային 16-րդ ավիացիոն բանակի կործանիչները: Կործանիչները եւ «Իլ-2»-ն ահեղ գրոհային ինքնաթիռներն օդից խորտակիչ հարվածներ էին հասցնում թշնամու դիրքերին, որի տանկերն ու հետեակը փորձում էին հակահարձակման անցնել: Բայց եւ Կարմիր բանակն այստեղ ծանր կորուստներ ունեցավ: Գրոհայինների խմբի առջեւից գնում էին հրամանատարները, կոմունիստները, խորհրդային Միության հերոսները: Խիզախության համար հերոսի Ոսկե աստղով պարգևատրված 40 սպա ու զինվոր հավերժ մնացան եւ լուսնյան հողում:

1943 թվականի նոյեմբերի 1-ին Լոնի մոտ գտնվող դաշտային օդանավակայանից օդ բարձրացավ հերթական գրոհայինը՝ իրանի վրա կարմիր աստղեր: Նրա օդաչուն, ում համագետտի վրա ոսկե մեդալ էր, խորհրդային Միության հերոս, կապիտան Սամսոն Մկրտումյանն էր: Օդաչուի թիկունքում ճակատային դժվարին ուղի էր ընկած, Զյուսիսային Կովկասի լեռների եւ ուկրաինական տափաստանների վրա մղված կատաղի մարտեր: Իսկ առաջին անգամ նա օդ բարձրացավ տանը տարի առաջ Ստալինգրադում...

### Կոմերիտականներ են, կամավորներ

Սամսոնը ծնվել է 1910 թվականին Չանգեզուրի Բռնակոթ գյուղում: Զոդի սակավությունը ճնշում էր մինչ-հեղափոխական Զայաստանի գյուղացիական ընտանիքների կյանքը, այնպես, ինչպես ծանր ժայռերն անդրկովկասյան պտղաբեր հովիտներին: Շուտով սկսվեց իմպերիալիստական պատերազմը: Իսկ դրա հետ մեկտեղ ռուսահայաստանում երեւացին զաղթականներ, նրանք, ում բախտ էր վիճակվել փրկվել հայոց ահավոր ցեղասպանությունից, որ օսմանյան կայսրությունում կազմակերպել էին երիտթուրքերի ազգայնական հանցանքները, ոստիկանությունն ու բանակը: Այդ ժամանակ ոչ ոք չգիտեր, որ դա ազգային հողի վրա կազմակերպված՝ 20-րդ դարի առաջին զանգվածային սպանոց է եւ պիտի նախորդեր նացիստական ու այլ ցեղասպանություններին, որոնցով այնքան հարուստ էր 20-րդ դարը:

Մանկական տարիներից Սամսոնը ստիպված էր իր եւ ընտա-

նիքի համար հաց վաստակել բատրակական ոչ դյուրին աշխատանքով: Խորհրդային Զայաստանում երիտասարդության առջեւ նոր հեռանկարներ էին բացվել, եւ Սամսոնն ավարտեց գյուղական դպրոցը, իսկ հետո ընդունվեց Երկաթուղային տեխնիկում: Նա՝ ակտիվ կոմերիտականը, դարձավ կոմունիստական երիտասարդական կազմակերպության քարտուղար: 20-ականների կոմերիտիությունը հազիվ թե նման էր իր ավելի բյուրոկրատական-ձեւական ու լեռնային: Երիտասարդական բջիջներում եռում էին կյանքն ու էներգիան, կատաղի, ինչպես ջրերը կովկասյան լեռնային գետերում... Իմիջիայլոց այդ հակասական ժամանակներն ունեին իրականության այլ կողմ. հայկական ազգային դաշնակների դեմ արշավը սահուն կերպով վերածեց այսբարի «Միջազգային տրոցկիզմի դեմ» եւ այդպես շարունակ: 1928թ. Սամսոն Մկրտումյանը տեղափոխվեց Բաքու, որտեղ նրա եղբայրն էր ապրում: Այստեղ Սամսոնն աշխատում էր նավթարդյունաբերությունում: Բաքուն ինտերնացիոնալ քաղաք էր, ինչպես եւ նավթագործների կազմը: Նորբելի նախկին ձեռնարկություններում համեմաշխ աշխատում էին հայերը, ռուսները, ադրբեջանցիները, նույնիսկ ծագումով իրանցիներ: Իսկ ահա վերջերս ցարական ոստիկանությունը եւ կիսաֆեոդալական վերնախավն այստեղ ազգամիջյան ջարդեր էին կազմակերպում: Մկրտումյանն ընտրվում է նավթարդյունաբերության կոմերիտիության կոմիտեի քարտուղար, իսկ հետո Բաքվի ԼԿԵՄ շրջկոմի քարտուղար:

1933 թվական... Գերմանիայում իշխանության եկավ Ադոլֆ Հիտլերի նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը: Ամենուր ֆաշիստա-մետ խմբավորումներն սկսում են նետվել իշխանության, Զայաստանի հարեւան Թուրքիայից մինչեւ հեռավոր Մերձբալթիկա: Պատերազմը մոտենում է ԽՍՀՄ-ի սահմաններին, եւ հազարավոր երիտասարդներ կամավոր մեկնում են անրապոդեյու Կարմիր բանակը: 1933-ին Սամսոնն ընդունվում է Ստալինգրադի զինվորական ավիացիոն օդաչուական դպրոցը, որն ավարտում է երկու տարի անց: Նրա ուսադիրների արդեն շողշողում են կրոստեր լեյտենանտի աստղերը: Սակայն կարմիր օդային նավատորմը վերազինվում էր նոր մարտական մեքենաներով, 1935 թվականին Մկրտումյանը նորից դառնում է կուրսանտ, այս անգամ Բորիսուգլեբսկու ավիացիոն օդաչուական դպրոցում, որտեղ սովորեցնում են բարձրագույն պիլոտաժի վարժություններ: Երկրի հնագույն օդաչուական ուսումնարաններից մեկում մշակված «տակառները», «մահվան օղակները», կորուսլ շրջադարձերը (վիրաժ) եւ խոյնթացները ոչ մեկ անգամ հետազայում Սամսոնին պետք եկան ռազմաճակատում: 1936 թվականից նա շարային օդաչու էր: 1939-1940 թվականներին նա մասնակցեց խորհրդաֆիննական պատերազմին: Խորհրդային ռմբակոծիչները հզոր բետոնաշարդ ռումբերով օգնեցին կոտրել «Մանրեիեյան գիծը»:

1942թ. աշուն, Գրոզնու երկինքը: Մկրտումյանը գրոհայինների «ուռնյակով» նկատում է «յունկերսներ» խմբին: Վառելիքը սպառվում էր, բայց կապիտանն առանց տատանվելու հրաման է արձակում. «Գրոհել»: Գերմանական երկու գիշակեր թռչունները խփված են եւ քարի պես ընկնում են՝ իրենց հետեւից թողնելով սեւ, խիտ ծխի զանգված: Մյուս «յունկերսները» ծլկում են: 1942թ. նոյեմբերի 6-ին Եսկադրիլիան թռչում է՝ գրոհելու գերմանական տանկերի վրա Գիգել աուլի շրջանում: Բայց այդտեղ Եսկադրիլիայի վրա հարձակվում են գերմանական վեց մեստերներ: Մկրտումյանը հրաման է տալիս ողջ անձնակազմին հեռանալ, իսկ ինքը մնում է նրանց առաջը փակելու: Զմուտ օդաչուի ձեռքերում ինքնաթիռը վերածվում է մանրեւող կործանիչի: Բայց գերմանացիները շատ էին, իսկ մեստերներից մեկն աստիճանաբար մոտենում է: Սամսոնն արագ մանեւում է՝ հեռանալով թշնամու գրոհի գծից: Իսկ ահա խորհրդային գրոհայինի կրակահեր-

### «Չէ՛ որ դրանք մեր սարերն են...»

Նացիստական Գերմանիայի՝ խորհրդային Միության վրա հարձակվելու նախօրեին 138-րդ արագընթաց ռմբակոծիչ



ավիագունդը, որում Սամսոն Մկրտումյանը ծառայում էր որպես Եսկադրիլիայի հրամանատարի քաղցով տեղակալ, կանգնած էր Բելի Ցերկովում: Պատերազմի առաջին օրերից օդաչուներն արագընթաց ռմբակոծիչներով ռմբահարում էին վերմախտի հարձակման անցած շարայուները՝ ջանալով կանգնեցնել նրանց առաջխաղացումը դեպի արեւելք: Եվ չնայած 1941 թվականի ամռանը կրած մեր ծանր պարտություններին եւ կորուստներին՝ գերմանական կայսերական պատերազմը, այնուամենայնիվ, ծախսովեց: Իրենց հիմնալի դրսեւորելով Իսպանիայում՝ արագընթաց ռմբակոծիչները, որ արագությամբ գերազանցում էին շատ կործանիչների, Զայրեական պատերազմի սկզբում արդեն հնացել էին: Զրկված լինելով հուսալի գրահից եւ արդյունավետ պաշտպանական սպառազինությունից՝ արագընթաց ռմբակոծիչները հաճախ խոցվում էին գեներալային կրակից եւ գերմանական նոր Մ109 կործանիչներից: Սակայն շուտով Մկրտումյանի զորամասը վերազինվեց «Իլ-2» հզոր գրոհային ինքնաթիռներով եւ վերանվանվեց 805-րդ գրոհային ավիագունդ:

1942թ. աշուն, Գրոզնու երկինքը: Մկրտումյանը գրոհայինների «ուռնյակով» նկատում է «յունկերսներ» խմբին: Վառելիքը սպառվում էր, բայց կապիտանն առանց տատանվելու հրաման է արձակում. «Գրոհել»: Գերմանական երկու գիշակեր թռչունները խփված են եւ քարի պես ընկնում են՝ իրենց հետեւից թողնելով սեւ, խիտ ծխի զանգված: Մյուս «յունկերսները» ծլկում են: 1942թ. նոյեմբերի 6-ին Եսկադրիլիան թռչում է՝ գրոհելու գերմանական տանկերի վրա Գիգել աուլի շրջանում: Բայց այդտեղ Եսկադրիլիայի վրա հարձակվում են գերմանական վեց մեստերներ: Մկրտումյանը հրաման է տալիս ողջ անձնակազմին հեռանալ, իսկ ինքը մնում է նրանց առաջը փակելու: Զմուտ օդաչուի ձեռքերում ինքնաթիռը վերածվում է մանրեւող կործանիչի: Բայց գերմանացիները շատ էին, իսկ մեստերներից մեկն աստիճանաբար մոտենում է: Սամսոնն արագ մանեւում է՝ հեռանալով թշնամու գրոհի գծից: Իսկ ահա խորհրդային գրոհայինի կրակահեր-

թը խփում է «Ֆրիցին»: «Մեստեր-միտ»-ը ընկնում է, սակայն մյուս գերմանական կործանիչները կրակով հարվածում են խորհրդային կործանիչին: Թշնամու գնդակները դիպչում են Մկրտումյանի զլխին եւ թիկունքին: Արյունով լցվում է դեմքը, աջ ձեռքը չի շարժվում: Բայց խորհրդային օդաչուն չի հանձնվում, վերջին ուժերով նա ինքնաթիռը դեկավարում է՝ գնալով դեպի վայրէջք: Ներքեւում ժայռեր են, բայց չէ՛ որ հայ օդաչուն ծնվել է սարերում... Աչքերում ամեն ինչ պղտորվում է արյան կորստից, սակայն Մկրտումյանը գտնում է մի հրապարակ լեռան կողքին եւ այնտեղ իջեցնում իր «խյուշին»: Դուրս գալով խցիկից՝ սողում է մի կողմի վրա: Ինքնաթիռը պայթում է: Սամսոն Մկրտումյանն ինքնագիտակցության է գալիս հոսափտալի հիվանդախեղանքով: Բժիշկները վեց վերջ են հաշվում նրա մարմնի վրա:

1942թ. դեկտեմբերի 13-ին կապիտան Մկրտումյանին շնորհվում է խորհրդային Միության հերոսի կոչում:

### Վերջին թռիչքը

Բուժվելուց հետո խիզախ օդաչուին գործուղում են Մոսկվա ուսման, ռազմաճակատ նա վերադառնում է արդեն որպես գրոհային ավիացիայի գնդի հրամանատարի տեղակալ: Ծանր մարտեր եղան Կրասնոդարի, Նովոռոսիյսկի, Խարկովի, Չերկասիի, Կիեւի երկնքում: Սամսոնի հաշվին 219 մարտական թռիչք էր, որոնց ընթացքում ոչնչացվել են թշնամու տասը ինքնաթիռ եւ 140 տանկ, հարյուրավոր ավտոմեքենաներ եւ հակառակորդի բազում կենդանի ուժեր:

Եվ ահա 1943 թվականի նոյեմբերի 1-ին «Իլ-2»-ը, որ դեկավարում էր կապիտան Սամսոն Մկրտումյանը, մեկնարկեց Դնեպրի բելառուսական ափից: Բայց տուն այլեւս չվերադարձավ...

Միայն վերջերս հնարավոր եղավ պարզել այդ թռիչքի մի քանի հաճախմանքներ: Սկսնատեսների պատմածով՝ նոյեմբերի 1-ին Նովոնիկոլաեկայի վրա, որ գտնվում է Դնեպրոպետրովսկի մարզի Վերլսեղնեպրովսկյան շրջանում, խուզող թռիչքով հայտնվեց խորհրդային

ինքնաթիռ: Անվատահորեն տարուբերվելով՝ ինքնաթիռը իջավ ավանի ծայրամասում: Երբ խցիկը բացեցին, օդաչուն արդեն մահացած էր: Ինքնաթիռը խոցված էր տարբեր տեղերից, պտուտակի մի թելը կտրված էր: Զոհվածի արտահագուստի գրպանից հանեցին թռիչքային ժետոնը՝ կապիտան Սամսոն Մովսեսի Մկրտումյան, խորհրդային Միության հերոս: Շուտով տեղ հասած ներքոնդումատի սպան տեղեկանք պատրաստեց իր դեկավարության համար: Իսկ զոհված օդաչուին հուղարկավորեցին Եղբայրական գերեզմանում՝ կարմիրբանակայինների հետ, ովքեր դրանից առաջ զոհվել էին Նովոնիկոլաեկայի ազատագրության համար...

Սակայն խորհրդային Միության հերոս Սամսոն Մկրտումյանի վերջին թռիչքի բոլոր հանգամանքները դեռեւս պարզված չեն: Պարզ չէ անգամ, թե ինչու է նա հայտնվել իր թռչելու վայրից՝ Դնեպրոպետրովսկի մարզից, այդքան հեռու, Լոնից 500 կմ-ի վրա: «Իլ-2»-ի թռիչքի հեռավորությունը հնարավորություն էր տալիս կատարել ու նման չվերթեր իրականացնել, բայց միայն մի ուղղությամբ: Զայտնի չէ նաեւ, թե ինչ առաջադրանքով կապիտան Մկրտումյանն օդ բարձրացավ Լոնից 1943 թվականի նոյեմբերի 1-ին: Զնարկոր է, նա պետք է որեւէ հաղորդագրություն փոխանցեր Ուկրաինական ռազմաճակատի որեւէ շտաբի: Կամ, ընդհակառակը, որեւէ սպայի կամ գեներալի հասցրել էր Բելառուսական ռազմաճակատ եւ հետ էր վերադառնում իր չորրորդ ավիացիոն բանակը: Մկրտումյանի ինքնաթիռի խցիկում հրաձիգ չկար, հնարավոր է, այդ պատճառով փորձառու օդաչուն խոցվեց: Ինչպե՞ս կարող է գրոհայինի պտուտակի մի թելը կտրված խորհրդային Միության հերոսը մտնել իր վերջին մարտի մեջ եւ կատարել խոյսահարում, դրանք առայժմ բոլորը ենթադրություններ են:

Անվիճարկելի փաստ է այն, որ Կարմիր բանակի կապիտան, խորհրդային Միության հերոս, Զայաստանում ծնված Սամսոն Մկրտումյանն իր կյանքը տվել է Բելառուսիայի ազատագրության համար: Խորհրդային Միության հերոս, գոմելցի Եվգենի Բիրբաբերը հանգչում է Բորոդաեկա գյուղի, նույն այդ Վերլսեղնեպրովսկի շրջանում գտնվող, Եղբայրական գերեզմանում եւ զոհվել է Ուկրաինայի ազատագրության մարտերում: Թուրքական լծից Զայաստանի եւ Բուլղարիայի ազատագրության համար 1877-1878թթ. պատերազմում ընկած ռուսական բանակի զինվորների անունները դրոշմված են 160-րդ արխագական հետեւակային գնդի զոհվածների բրոնզեմույլ պատին, որ Գոմելում է գտնվում:

Ազատության համար համատեղ պայքարում թափված արյունն ամրացնում էր խորհրդային Միության ժողովուրդների բարեկամությունը: Եվ եթե ինչ-որ մեկի մեջ այսօր ցանկություն առաջանա երկպառակություն սերմանել մեր մեջ, ընկած հերոսները եւ նրանց պայծառ հիշատակը կկանգնեն նրա ճանապարհին:

**Չ. Գ.** խորհրդային Միության հերոս, կապիտան Սամսոն Մկրտումյանի զոհվելու հանգամանքները հնարավոր եղավ պարզել Զայաստանի եւ Բելառուսի պատմաբաններ եւ հասարակական գործիչներ Արմեն Խելչյանի, Կլիմենտ Զարությունյանի եւ Սերգեյ Կրաուլեի ջանքերի շնորհիվ:

**ՅՈՒՐԻ ՉԼՈՒՇԱԿՈՎ**  
**Ռուսերենից թարգմանությունը՝**  
**Վահրամ Օրբելյանի**  
**«Վեչերնի Գոմել»**,  
**28 հոկտեմբերի 2015թ.**

# Քայլ դեպի համընդհանուր ներառական կրթություն

Էջ 1 | պետական քաղաքականություն:

Առողջ եւ հաշմանդամ երեխաների մանկավարժական ինտեգրումը որպէս միասնական ուսուցում եւ դաստիարակություն, հավասար չափով է ներկայացնում բոլոր երեխաների կրթական շահերը: Ինտեգրումը որպէս մանկավարժական երեւոյթ թվագրվում է մի քանի դար:

Տեղեկությունները, որոնք մեզ են հասել, թույլ են տալիս եզրակացնել, որ մարդկության պատմության սկզբում, մարդիկ իրենց գոյատեւելու ձգտումով ուշադրություն էին դարձնում միայն մատաղ սերնդի առողջ ներկայացուցիչներին, իսկ հիվանդ խմբի կամ ցեղի անդամները մնում էին ուշադրությունից դուրս:

Քարի կամ բրոնզի դարի առաջին շրջանում այնպիսի երեւոյթի առաջացումը, ինչպիսին նստակեցությունն է, տվեց թույլ կլանի մասին հոգալու հնարավորություն: Եգիպտոսում կույրերը եւ հոգեկան հիվանդներն արժանանում էին բարի վերաբերմունքի, բայց մտավոր հետամնացություն ունեցող երեխաները մերժված էին հասարակության կողմից: Այլ խոսքերով, անտիկ աշխարհում չկար միասնական ուսուցման եւ դաստիարակության նախադեպ նույնիսկ տարեկան, ոչ կազմակերպված ձեւով: Քրիստոնեությունը՝ նոր ուսմանը, եկավ տարածելու նոր գաղափարներ եւ արժեքներ: Այն իր հետ հեթանոսական աշխարհի բերեց կրոնական կարեկցանք, ուշադրություն թույլերի եւ տառապողների նկատմամբ:

Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման առաջին փորձերը նկատվել են Կիւստան պետության զարգացման վաղ շրջանում: Այն առաջին հերթին կապված է Ռուսիայի քրիստոնեացման հետ՝ X դարում: 996 թվականին հաստատված կանոնադրությամբ ուղղափառ եկեղեցին պարտավոր էր հոգ տանել հավատացյալների, կարիքավորների, աղքատ եւ տկարամիտ մարդկանց մասին: Բացվում էին դպրոցներ այդպիսի երեխաների կրթության համար: Ի տարբերություն արեւմտյան եկեղեցու, որը նվիրված է բարեգործությանը՝ աղքատ ու հիվանդ մարդ կանց բուժմանը, ռուսական եկեղեցին զբաղվում էր նաեւ նրանց ուսուցմամբ եւ դաստիարակությամբ, ինչը հաստատում է այն միտքը, որ դեռեւս առաջին շրջանում եղել են ինտեգրման անորոշ ու անկազմակերպ ձեւերը:

18-րդ դարում հռչակվեց համընդհանուր կրթության իրավունքը եւ պահանջվեց սահմանափակ հնարավորություններով (այդպէս էին անվանում հաշմանդամներին) մարդկանց տալ կրթության իրավունք: Դրանց սովորել կարողանալու ունակությունը հաստատվեց Փարիզում խուլուհանրերի եւ կույրերի համար առաջին պետական դպրոցներ բացելուց հետո, որոնք հատուկ կրթության համակարգի սկիզբն էին: Հետագայում ոչ կազմակերպված ինտեգրման դրսեւորումը միայն խանգարում էր կրթադաստիարակչական գործընթացին, որի հետեւանքով անցավ հանրակրթական եւ հատուկ կրթության առանձնացման ճանապարհով: Նախկին կրթական համակարգերում սոցիալական հարաբերությունները հեռու էին ներդաշնակ լինելուց: Այդ թերությունն արտահայտվում էր



ԼԻԼԻԹ ԲԱԲՅԱՆ

Կրթության ազգային ինստիտուտի Կապանի մասնաճյուղի գլխավոր մասնագետ

երեխաներին բաժանելով «նորմալ մեծամասնության» եւ «հետ մնացող փոքրամասնության»՝ մեկուսացնելով նրանց միմյանցից եւ զրկելով նրանց լիարժեք շփման հնարավորությունից: Կրթության ոլորտում, մասնավորապէս՝ այդպիսի աններդաշնակությունը, արտահայտվում էր ընդհանուր եւ հատուկ կրթական ծրագրերի բաժանումներով:

**ՀՀ-ն, 2010 թվականին վավերացնելով ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան, ստանձնել է միջազգային պարտավորություն՝ գործող օրենսդրությունը համապատասխանեցնել կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներին: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի ուսուցման կազմակերպման ռազմավարությունը ելակետային դրույթների հիմքի վրա.**

- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության եւ պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցերում,
- կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական եւ այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,
- երեխայի համակողմանի բնական զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումն առանց ընտանիքից եւ հասարակությունից նրա առանձնացման:

Ներառական կրթության զարգացմանը զուգահեռ հանրապետությունում նվազում է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների թիվը: Արդյունքում հանրակրթության համակարգում կմնա 6 հատուկ ուսումնական հաստատություն («Երեւանի թիվ 8 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ, «Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ, «Երեւանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 15 հատուկ դպրոց» ՊՈԱԿ, «Հանրապետական թիվ 2 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ, «Երեւանի տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ, «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ):

Այսօր Հայաստանում արդեն գործում է 180 ներառական դպրոց: Սյունիքի մարզում ներառական կրթության ներդրման աշխատանքները սկսվել են 2008թ.-ից: Մինչեւ 2015թ. Սյունիքի մարզի Կապանի եւ Մեղրու տարածաշրջանների 4 դպրոց արդեն իրականացնում էր ներառական կրթություն: 2014թ.-ից համընդհանուր ներառում որդեգրած Հայաստանի Հանրապետությունում նոր թափ ստացան ներառականության գործընթացները կրթության ոլորտում՝ ուղեկցվելով սոցիալ-տնտեսական եւ բովանդակային փոփոխություններով: Այսօր Սյունիքի մարզում իրականացվում է հանրակրթության համակարգում համընդհանուր ներառման ծրագիր: 2015թ. օգոստոսի 10-ից 15-ը կրթության ազգային ինստիտուտի Կապանի մասնաճյուղում իրականացվել են մասնաճյուղի մասնագետների եւ հանրակրթական դպրոցների տնօրենների եւ ուսուցիչների 30-ժամյա վերապատրաստումներ: Մասնակիցները ստացել են հավաստագրեր: ԱՄՆ ՄՁ գործակալության, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսավորմամբ, «Հոյսի կամուրջ» ՀԿ-ի աջակցությամբ սթեպտեմբերի 22-ից մինչեւ նոյեմբերի 28-ը ՎԱԻ-ի Կապանի մասնաճյուղի կողմից Կապանի եւ Մեղրու տարածաշրջանների 50 հանրակրթական դպրոցում կազմակերպվել եւ իրականացվել են ներառական կրթության 30-ժամյա դասընթացներ: Դասընթացները կազմակերպվել են 51 խմբով, դասընթացներին մասնակցել է Կապանի տարածաշրջանի հանրակրթական դպրոցների 748, Մեղրու՝ 188 ուսուցիչ: Վերապատրաստումներին եւ Կապանի, եւ Մեղրու դպրոցների ուսուցիչները ցուցաբերել են բարձր ակտիվություն եւ 100 տոկոս մասնակցություն: Բաց ու անմիջական շփման մթնոլորտում ուսուցիչները ներկայացրել են մտախոզությունները, խնդիրները, կիսվել հնարավոր դժվարությունների մասին մտավիտություններով, առաջարկություններ արել, ծանոթացել խնդիրների հաղթահարման այլոց մանկավարժական փորձին, հարստացրել սեփականը: Ուսուցիչների կողմից բարձրագույն խնդիրները, դիտարկումներն ու առաջարկները վերապատրաստողների կողմից ներկայացվել են հասցեատերերին, քննարկվել եւ տրվել են սպառիչ պատասխաններ: Դպրոցներում ուսուցիչների վերապատրաստումներին հաջորդել են ծնողական համայնքների հետ կազմակերպվող դասընթացները եւ դասալսումները:

# ԳՐՈՂԸ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

Էջ 2 | թյան հողվություն: Առաջին գեկուցումը՝ «Ստալինյան հալածանքներն ու Սերո խանգարանը. «Կոստի քեռին» պատմվածքի գրություն կենսահիմքն ու շարժառիթները» թեմայով, ներկայացրեց Լիլիթ Թունյանը (բ.գ.թ.):

Պատմվածքին խանգարանը կցել է մի ծանուցագիր՝ «Այս պատմությունը, որ իրական հիմք ունի, գրել են 1937 թվականի նոյեմբերին Աշխաբաթ քաղաքում, ուր փախել էի Չեկայի ձեռքից»: Գրվածքն առաջին անգամ տպագրվել է 1991թվականին «Այոնյան» մարզային թերթում եւ իրական կենսահիմքով ներկայացնում է գրողի կյանքի այն դժոխային շրջանը, երբ ստալինյան ռեժիմի կողմից հորն աքսորելուց ու գնդակահարելուց հետո իրեն էլ հեռացրին կոմերիտիության շարքերից, զրկեցին ուսուցչի աշխատանքից, նույնիսկ հացի կտրոնից եւ որպէս «ժողովրդի թշնամու» զավակի՝ սկսեցին հետապնդել ու հալածել, որի պատճառով էլ նա ստիպված եղավ փախչել Միջին Ասիա: Դահձի մտրակը դիպավ նաեւ նրա ընտանիքին՝ գրողի հոգում բազմախոց ու անմոռ վերք բացելով: Թեւեւ 1961 թվականին գրած ինքնակենսագրականում խանգարանը շրջանցում է իր կրած տոկոսի տառապանքները պատանության օրերին, նաեւ պատերազմից վերադառնալուց հետո, չի նշում հոր քաղաքի ու գնդակահարության մասին 1937-ի «սեւ տարում», այնուհանդերձ հետագայում «Հորս հետ եւ առանց հորս» ինքնակենսագրական վիպակում մանրամասն նկարագրում է հոր կերպարն ու խնձախոս տոհմի մյուս ներկայացուցիչների հետապնդումներով, տազնապնդում ու զրկանքներով լի ճանապարհը:

Անուշ Ելյազանի գեկուցումը՝ «Այո, դա չպետք է կրկնվի», խանգարանի բացառիկ լուսաբանումները «Գրական թերթ»-ում տպագրված հարցազրույցում խորագրով, շարունակում է «ստալինյան թեման», ներկայացնում գրողի կյանքի այսպէս ասած «ստալինյան հալածանքների» շրջանը:

«Գրական թերթ»-ի 1988 թվականի դեկտեմբերի 2-ի համարում տպագրվում է Սերո խանգարանի բացառիկ հարցազրույցներից մեկը՝ «Այո, դա չպետք է կրկնվի» խորագրով: Հարցազրույցի շարժառիթը, ինչպէս վկայում է արձակագիր, հրապարակախոս Էդուարդ Չոխրաբյանը, ով է թերթի խմբագրի խնդրանքով վարել է երկխոսությունը, նույն թվականին «խորհրդային գրականություն» ամսագրի թիվ 5-6-ում տպագրված Սուրեն Դազարյանի հեղինակած հուշագրությունն էր՝ «Դա չպետք է կրկնվի» խորագրով: Սերո խանգարանը, անդրադառնալով Ս.Դազարյանի վերոնշյալ հուշապատմման եւ այն համարելով «հայ կյանքի 30-40-ական թթ. ստալինյան ոճրագործության համաժողովրդական դժբախտության հանրագիտարան», ուշագրավ բացահայտումներ է անում այդ դժոխային ժամանակների մասին, պատմում հայրենի Գորիսում կատարված գաղտնի ղեկավարի, նաեւ իր ազգատոհմին պատուհասած ստալինյան արհավիրքի, հոր ձերբակալության ու գնդակահարության, իր ու ընտանիքի մյուս անդամների կրած զրկանքների, վարկաբեկումների, հայրենի քաղաքից փախուստի, մոր անօրինակ տառապանքների եւ

ժամանակի այլ ցավոտ խնդիրների մասին: Հարցազրույցը լավագույնս բացապարզում է խանգարան մտավորականի կեցվածքը 1930-ական թվականների բռնապետական իրականության ներքին ու արտաքին երեսների, շրջանային-միջազգային իրադրությունների, գարտուղի «լուծում» ստացած Նախիջեւան-Ղարաբաղյան հիմնահարցի հանդեպ: Խոսելով ժամանակի գրական հոգեւոր մասին՝ խանգարանը կարեւոր տեղեկություններ է հաղորդում նաեւ այն մասին, որ իր հուշերի գիրքը՝ «Ինչպէս հիշում եմ» խորագրով, ամբողջական չէ, որ այն «անգործն է խելված է, խուզված, եւ այդ խելունը կատարեցին առանց ինձ տեղյակ պահելու՝ մեր նախկին գաղափարական ղեկավարների ցուցումով»: Խանգարանը հաջորդող տողերում ներկայացնում է այն հատվածները, որոնք կրճատվել են գրքից՝ հատկապէս Բակունցի ու Մահարու մասին հուշագրություններից, նույն գրքով նաեւ ջնջվել են, ինչպէս ինքն է բնորոշում, «խոշոր եղջերավոր» մարդակերների բազմաթիվ անունները...

«Սերո խանգարանը եւ Դարաբաղյան շարժումը» գեկուցումով հանդես եկավ Շողեր Արզանյանը: Դարաբաղյան շարժման առաջին իսկ օրերից խանգարանը կանգնած էր շարժման ակունքներում եւ կազմում էր նրա անբախտելի մասը: Ձեկուցաբերը հանգամանակից ներկայացրեց Սերո խանգարանի պատմական մեծ դերակատարությունը՝ Դարաբաղյան հիմնահարցի լուծման խորհուրդը ուղիներում, խոսեց գրողի քաղաքացիական խիզախության ու ակտիվության մասին, որի անմասնադատ օրինակը խՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լեւոնի Իլիչ Բրեժնեւին գրված նամակն էր. խանգարանը կենտկոմի ղեկավարությանը մեղադրում էր հասարակական քաղաքականության վարելու, Լեւոնի Դարաբաղի հայրությանն Ադրբեջանի ճիրաններում խեղդելու համար: Արզանյանը մանրամասն խոսեց նաեւ կրթության շարժառիթների, կենսահանգամանքների, ունեցած մեծածավալ արձագանքների մասին: Արզանյան ազատագրական պայքարից նվիրված իր գործունեությամբ խանգարանն ինքնավստահություն, խիզախություն, քաջություն ու հանդուրժողական պատգամեց սերունդներին: Այդ գործունեությունն ունեցավ նաեւ գրական թռիչք. Ս.Խանգարանը դեպի Արցախի արմատները գնաց գեղարվեստական խոսքով՝ ճիշտ ժամանակին գրելով ու հրատարակելով «Շուշի» վեպը (1991-ին), որն արտացոլում է 18-րդ դարի վերջին քառորդի արցախյան իրադարձությունները: Ժամանակագրական առումով վեպը «Մխիթար Սպարապետի» շարունակությունն է: Վեպում Ս.Խանգարանը բացահայտում է Արցախի ազատագրական պայքարի արմատները, ցույց տալիս ժողովրդի անկոտորում կամքը: 18-րդ դարի վերջին քառորդի իրադարձությունները, ժողովրդի մղած հերոսական պայքարը քոչվոր ցեղերի ու թուրք բարբարոսների դեմ Ս.Խանգարանը ներկայացնում է «մեր օրերի հետ նրա ունեցած մերձավորության տեսանկյունից»:

### Բարձրագույն կրթություն



Մոդուլների քննարկումը Վիլախում (Ավստրիա)

**վարպետների ու գործարարների շրջանում կատարված հարցումների արդյունքների և փորձաշրջանի ճարտարագիտական մասնագիտությունների աշխարհագրորդական վիճակի վերլուծության հիման վրա որոշվել են պահանջարկվող մասնագետների ուղղվածությունը և ապագա ճարտարագետներին անհրաժեշտ կոմպլեքսիաների կազմը: Դրանից և մասնաճյուղում տեղադրվելիք հեռավար հիբրիդային լաբորատորիայի բնույթից էլ ներկայումս ընդհանուր էլ են այն մասնագիտական ուղղությունները, որոնց համապատասխան նախագծի մասնաճյուղային կատարող խումբը ձեռնարկում է եղել երեք հետազոտությունները:**

- «Թվային համակարգերի քոմպիլոթերային մոդելավորում՝ արագ նախատիպավորման մեթոդի կիրառությամբ» (մշակող՝ տ.գ.դ., դոց. Ս.Շ. Բալասանյան),
- «Տեխնոլոգիական գործընթացների քոմպիլոթերացված կառավարում՝ ներդրված կոնտրոլերների կիրառությամբ» (մշակողներ՝ Ս.Շ. Բալասանյան, դասախոս Յ.Ս. Գեւորգյան),
- «Թվային կառավարման համակարգերի նախագծում» (մշակողներ՝ Ս.Շ. Բալասանյան, դասախոս Մ.Ա. Աղազուլյան):

Վերոնշյալ մոդուլներից առաջին երկուսը նախատեսված են տեղեկատվական տեխնոլոգիաների

(SS) և ավտոմատացման ոլորտի արդյունաբերական մասնագետների վերապատրաստման համար, իսկ երրորդ մոդուլը՝ SS մասնագիտության ուսանողների խորացված ուսուցման համար:

2014թ. հունիսին մոդուլների հեղինակները մասնակցեցին ուսումնական մոդուլների մշակման մեթոդների և հեռավար հիբրիդային լաբորատորիայի ուսումնասիրման նպատակով Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանում կազմակերպված կարժամանակին:

Միջազգային չափորոշիչներին համապատասխան մշակված մոդուլների նախնական տարբերակները 2015թ. հունվարին ներկայացվեցին Վիլախում (Ավստրիա) կայացած Տեմպուս Նախագծի կատարողների հանդիպմանը և արժանացան «Որակ Ավստրիա. Ուսուցում, Սերտիֆիկացում և Գնահատում» ընկերության մասնագետների հավանությանը:

Մշակված մոդուլները (հայերեն և անգլերեն) տեղադրվել են մասնաճյուղի հեռավար ուսուցման MOODLE (Modular Object-Oriented Dynamic Learning Environment՝ մոդուլային օբյեկտավորված մոդուլային ուսումնական միջավայր) պորտալում (www.moodle.seuakapan.com կայքում) և հասանելի են ինչպես ուսանողների, դասախոսների, այնպես էլ արդյունաբերությունում աշխատող մասնագետների համար: Նշված պորտալում կտեղադրվեն նաև նախագծի մասնակից բուհերի (Ուկրաինայի և Վրաստանի) մշակված հինգ մոդուլը հայերենով:

Մասնաճյուղում 2015թ. փետրվարից ԻՏՀ-ի մասնագետների աշակցությամբ սկսվել են 23200 եվրո արժողությամբ GOLDI հեռավար հիբրիդային լաբորատորիայի տեղակայման և կարգաբերման աշխատանքները: Հեռավար լաբորատորիայի կազմում գտնվող էլեկտրամեխանիկական մոդելների ու ծրագրային ապահովման տեղադրման և կարգաբերման նպատակով 2015թ. հուլիսին

## TEMPUS ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՊՅ-Ի ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ

Բոլոնիայի գործընթացի շրջանակներում բարձրագույն կրթության միջազգայնացման և եվրոպական կրթական միասնական տարածք ապահովելու նպատակով ուսանողների կոմպետենցիաների և ուսումնառության վերջնարդյունքների վրա հիմնված ուսանողակետորոն «Թյունինգյան մեթոդաբանության» կիրառումը պահանջում է բարձրագույն մասնագիտական ուսումնական գործընթացում կրթության կազմակերպման նորագույն միջոցների հրատապ ներդրում: Այդպիսի

միջոցներից է Իլմենաուի տեխնոլոգիական համալսարանի (ԻՏՀ, Գերմանիա) համակարգմամբ, ՀԱՊՅ Երևանի կրթահամալիրի, Կապանի մասնաճյուղի, Հայաստանի ամերիկյան համալսարանի և յոթ եվրոպական բուհի ու տասնմեկ ընկերության մասնակցությամբ իրականացվող «Արդյունաբերական համագործակցություն և հեռավար ճարտարագիտություն ու վիրտուալ գործիքակազմի վրա հիմնված ստեղծագործական ճարտարագիտական կրթություն» 530278-TEM-

PUS-1-2012-1-DE-TEMPUS-JPHE միջազգային նախագծի կատարման ընթացքում մշակվող ուսումնական մոդուլները և ԻՏՀ-ի ինտեգրացված կապի համակարգերի դեպարտամենտի կողմից մշակված GOLDI (Grid of Online Laboratory Devices Ilmenau՝ Իլմենաուի հեռավար լաբորատոր սարքերի ցանց) հիբրիդային լաբորատորիան:

### Մասնաճյուղի դասախոսների, շրջանա-

## ԳՐՈՂԸ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ

5 Արուս Հայրապետյանի զեկուցումը դարձյալ արխիվային նյութի լուսաբանման փորձ էր, քննության էր առնվել Ս.Խանգադյանի բաց նամակը Նաիրի Ջարյանին: Գրողը նամակին կցել է մի խոսուն ծանուցագիր՝ «Գրել եմ 1967 թվականին, սակայն չի տպագրվել»: Ազգակը 1967թ. «Սովետական գրականություն» ամսագրի թիվ 4-ում և Ն.Ջարյանի հրապարակած հերթական տխրահեշակ հոդվածն էր՝ «Մթնոլորտային մոտորումներ» խորագրով, որը հեղինակը որպես ճառ ներկայացրել էր նաև գրողների համագումարում: Ցավոք, ժամանակի գրաքննությունը մերժեց հրապարակել Սերո Խանգադյանի չափազանց դիպուկ գրված անդրադարձ-նամակը, որն արժանի հակահարված կլիներ Ջարյանին ու նրա հերթական գազարխությանը: Նամակն առաջին անգամ հրապարակվեց «Սյունիք»-ում՝ 1993-ին և դարձավ անկախության շրջանում Ն.Ջարյանի պսակագրերման առաջին փայլուն դրսևորումներից մեկը:

համար առավել կարևոր խնդիրները, որոնց թվում առաջնահերթը մեր պատմության մութ ու անճանաչ էջերի բացահայտումն է, գեղարվեստական արժեքների և գրապատմական փաստերի անաչառ վերանայումը՝ առանց բողոքելու, գունագարդելու, կեղծելու և հարմարեցնելու... Հուշագրության տպավորիչ էջերին անդրադառնալուց հետո Անի Սկրտչյանն իր խոսքը համեմեց երգային գեղեցիկ կատարումով Գուսան Աշոտի երգացանկից: «Սյունիք» թերթի 1991 թվականի հունիսի 7-ի համարում տպագրվում է մի ակնարկ՝ «Սերո Խանգադյանն ու Սեդրիկն» խորագրով, որի հեղինակը Գորիսի Խոստ գյուղացի մանկավարժ ու լրագրող Արամայիս Սարգսյանն էր: Ակնարկը հնարավորություն է տալիս ծանոթանալու Սերո Խանգադյանի կյանքի այն էջերին, որոնք առնչվում են Սեդրիկ կատարած նրա այցելություններին, նպատակադիր հանդիպումներին, մտահոգություններին, շրջանում առկա տարաբնույթ խնդիրների լուծմանն ուղղված նրա հայրենամեկեր քայլերին: Սեդրու մասին Սերո Խանգադյանը խոսել է նաև «Հայրենապատում»-ի առանձին գլուխներում, որոնց անդրադարձավ Քրիստինե Թունյանը՝ զեկույցն ամփոփելով ակնարկային ընթերցումներով: Սերո Խանգադյանի կյանքն

չերը կյանքի վերջին տարիներին ամփոփել է առանձին հուշագրության մեջ՝ «Աշուղ Աշոտ» խորագրով, որը թեև չի ընդգրկվել հեղինակի «Ինչպես հիշում եմ» մեմուարային գրքում, բայց լրացնում-ամբողջացնում է հարազատ դիմանկարների շարքը: Խանգադյանը կյանքի վերջին տարիներին գուսանի մասին անտիպ, մեքենագիր հուշագրությունը Երեւանում փոխանցել է Էդուարդ Ջոհրաբյանին, ով և հրապարակել է գրության առանձին հատվածները...

ստեղծագործությունն անբաժան է հայ ժողովրդին վիճակված բոլոր փորձություններից, հայրենիքի ճակատագրից: Նրա ստեղծագործություններում տրոփում է հայրենիքի ճակատագրի սրված զգացողությունը, սրտի մորմոքը հայության ապրած մեծ ցավի նկատմամբ, նաև հավատը՝ ամեն գնով պատմության հարվածներին դիմադալու, գոյատևելու, արարման ու ժով գործնալու... Խանգադյանի ստեղծագործության մեջ մեծ տեղ են գրավում եղեռնի թեմայով գրված ստեղծագործությունները: Գեղարվեստական գործերում արտահայտած գաղափարները Խանգադյանը տարբեր առիթներով արժարծել է նաև հրապարակախոսական էջերում, հարցազրույցներում՝ թարմ լիցքեր հաղորդելով պատմության վերադարձում, հայ դատի հանրայնացման գործընթացին, որ 1960-ական թվականների կեսերից հայ հասարակական մտքի հիմնական հարցերից մեկն էր դարձել և բազմակողմանիորեն արժարծվում էր նաև գրականության ու հրապարակախոսության մեջ: Մարգարիտա Իվանյանն անդրադարձ կատարեց արխիվային մի ուշագրավ նյութի՝ 1990 թվականին «Գրական թերթ»-ի ապրիլի 20-ի համարում տպագրված Խանգադյանի «Դեպի արարում» խորագրով հրապարակախոսությանը՝ նվիրված Հայոց մեծ եղեռնի 75-ամյա տարելիցին: Հոդվածը, կարելի է ասել, հորդոր ու պատգամ է սերունդներին, որում Խանգադյանը շեշտում

է գոյապահպանության պայքարում հոգեւոր մաքառումների անգնահատելի նշանակությունը, արարման ուժի խորհուրդը: Յուրահատուկ փաստարկումներով են ներկայացվում ժամանակաշրջանին բնորոշ իրողությունները, որոնք բեկվում են անցյալ-ներկա-ապագա փոխմիասնության մեջ և առավել ուշագրավ դարձնում պատմության դասերի խանգադյանական արժարծումները:

Հոդվածն արդիաշունչ է նաև մեր օրերի համար և կարող է կամրջվել Եղեռնի 100-ամյակի խորհրդի հետ, դիտվել որպես մեծ գրողի խոսք-պատգամը ներկա սերունդներին:

Գիտաժողովն ամփոփվեց «Խանգադյանագիտության երեկն ու այսօրը» զեկուցումով (Թ.Մարության):

Ելույթ ունեցան նաև հանդիսականները: Նրանք բարձր գնահատեցին ձեռնարկը, երիտասարդ բանասերների մասնագիտական պրպտումները, որոնք, անշուշտ, հետաքրքրության նոր ալիք առաջ կբերեն Խանգադյանի կյանքի ու գործի նկատմամբ:

Գրողի մասին գեղեցիկ հուշեր պատմեց ՀԳՄ Սյունիքի մասնաճյուղի նախագահ, արձակագիր Արկարի Օատուրյանը:

Գրական հոբելյանի նշանակալիության և նմանօրինակ ձեռնարկների կարևորության մասին տպավորիչ խոսք ասաց քարաքանդակաչափան Արուսյանը և շնորհավորեց բոլորին նշանավոր դարադարձի առթիվ:

Կապանի մասնաճյուղ էին գործուղվել Իլմենաուի համալսարանի մասնագետներ Տոբիաս Ֆիտցլեն և Քրիստիան Լյուտցեն:

GOLDI-ն նախատեսված է «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտության մի շարք մասնագիտական առարկաների գործնական ու լաբորատոր պարապմունքների դասավանդման համար և հնարավորություն է տալիս ձեռք բերել գործնական հմտություններ ներդրված կառավարման համակարգերի մշակման բնագավառում: Այն իրականացվում է համացանցի օգտագործմամբ կազմակերպվող հեռավար ուսուցման միջոցով և ունի միջազգային մակարդակով դասընթացներ կազմակերպելու հնարավորություն: Բացի դրանից, ուսանողությունը հնարավորություն է ստանում պարապմունքներին մասնակցել առավել ճկուն, անհատական դասացուցակով: Միաժամանակ, Մշակված առավելությունները նվազեցնում են ուսումնական ծախսերը և բարձրացնում ուսման որակը՝ առաջարկելով մասնագիտական ուսուցման առավել զրավիչ, մատչելի և գործնական լայն հնարավորություններով օժտված արդիական միջոցներ:

Բացի ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղից, GOLDI լաբորատորիան ձեռք են բերել նաև ՀԱՊՀ-ի Երեւանյան կրթահամալիրը, Հայ-Ամերիկյան համալսարանը և Ջապրոֆթի (Ուկրաինա) ազգային տեխնիկական համալսարանը: Նշված հաստատությունների GOLDI լաբորատորիաները փոխադարձ հասանելի են <http://goldi-labs.net/> վեբ կայքի միջոցով, ինչը հնարավորություն է տալիս հեռավար լաբորատոր գիտափորձեր անցկացնել հիշյալ հաստատություններից յուրաքանչյուրի լաբորատորիայում:

GOLDI հեռավար լաբորատորիան ուսումնասիրելու և ուսումնական գործընթացում ներդրման նպատակով 2015թ. օգոստոսի 17-ից մինչև 19-ը Երեւանում՝ ՀԱՊՀ-ում, կազմակերպվեց ուսումնական մոդուլները մշակող դասախոսների վարժանք, որի ընթացքում ունենդիրներին ներկայացվեցին GOLDI-ի և թվային կառավարման համակարգերի նախագծման արդիական գործիքակազմի (Quartus II, Atmel Studio) կիրառությանը հեռավար լաբորատոր գիտափորձերի անցկացման տեսակետ ու գործնական միջոցներ:

Ուսումնական մոդուլների վերջնական տարբերակների մշակումից հետո դրանք կիրառությանը մարզի արդյունաբերական ձեռնարկությունների մասնագետների և Կապանի մասնաճյուղի ՏՏ մասնագիտության ուսանողների հետ կկազմակերպվեն փորձնական (պիլոտային) վարժանքներ, որոնք կվերահսկվեն «Որակ Ավատրիա. Ուսուցում, Սերտիֆիկացում և Գնահատում» ընկերության մասնագետների կողմից: Վարժանքների ավարտական ըմբռնությունները հաջողությամբ հանձնած ունենդիրներին կտրվեն միջազգային մոուշի հավաստագրեր:

Տեմպուս նախագծի վերոնշյալ արդյունքների ներդրման շնորհիվ ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղը կարող է դառնալ ինչպես հանրապետության, այնպես էլ արտերկրի ՏՏ ոլորտի մասնագետներին և ուսանողներին կրթական ծառայություններ մատուցող տարածաշրջանային վարժանքի կենտրոն:

**ՍԵՅՐԱՆ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**  
**ՀԱՊՀ-ի Կապանի մասնաճյուղի փրօբեկի տեղակալ գիտական աշխատանքների գծով, Տեմպուս նախագծի տեղային համակարգող, տեխնիկական գիտությունների դոկտոր**

# Ավանդույթներ, սովորույթներ. ո՞րը պահպանել և որից ձերբազատվել

## Տեսակէտ

Անգլիացիներն աշխարհի ամենապահպանողական ժողովուրդներից են: Եթե ավանդույթի պահպանումը բացասական ազդեցություն ունենար ազգի, պետության առաջընթացի վրա, ապա նրանք վաղուց ազատված կլինեին դրանից: Անգլիան նաև աշխարհի ամենաառաջին պաշտպանական երկրներից է, բայց դա չի խանգարել, որ նա մնա նաև ամենահին միապետություններից մեկը: Այստեղ, սկսած 17-րդ դարից, շատ բան է փոխվել, ասենք, պաշտպանության հիստորի գույնը մարման և դրա արարողակարգի մեջ նախագահողը կրում է նույնպիսի կեղծամ, ինչպես հինգ հարյուր տարի առաջ էին կրում: Անգլիացիների շատ սովորույթներով մենք այսօր էլ ենք հիանում, եթե պետական դրոշը բարձրացված է, ուրեմն թագուհին Բիզենհեյմյան պալատում է, իսկ եթե իջեցված է՝ ոչ: Մենք հաճույք ենք ստանում նրանց պատվով պահակություն անողների հագուստակապուստից, այդ պահակության արարողակարգից: Լեզենդներ են պատմում անգլիական սովորական թեյախյուրասիրության մասին: Մեր օրերում էլ են ծնվում նման լեզենդներ: Դրանցից մեկը պատմում է այն մասին, թե ինչպես թագուհին, երկայի համաձայն, թեյի է հրավիրում հորհրդային Միության ղեկավարներից մեկին: Թեյ խմելու սմանակ նկատում են, որ հյուրերից մեկը ձեռքով կիտրոնը մզում է թեյի մեջ: Հյուրասիրության հաջորդ օրը հրապարակվել է թագուհու հրամանը, որով արգելվել է երկրի պետական բոլոր մարմիններին՝ խորհրդային պատվիրակություններին հյուրասիրել թեյով: Թագուհու այս հրամանը գործում է ցայսօր: Անգլիական ամենահզոր քաղաքական կուսակցություններից մեկն այսպես էլ կոչվում է՝ պահպանողական:

Բայց անգլիացիներին հանգիստ թողնենք: Ինչպես կասեր մեր պատմախոսը հորեմացին՝ մենք էլ հիշատակման արժանի քիչ բան չունենք:

Մեր ժողովրդի համար հարյուրավոր նման սովորույթներ գալիս են դարերի խորքից: Մի քանիսի վրա հպանցիկ կանգ առնենք: Ընտանեկան ամենաուրախ տոնը նոր ընտանիքի ստեղծումն է, հարսանիքը: Որպես կանոն, հարսանիքները կատարվում էին աշնանը, դաշտի, բաղ ու բոստանի աշխատանքների ավարտից, բերք ու բարիքի ամբարումից հետո: Ամուսնության եկեղեցական ծիսակատարությանը հաջորդում էր այսպես կոչված աշխարհիկ արարողությունը: Հիմնական ուրախությանը՝ հարսանիքին, նախորդում էին մի շարք գեղեցիկ ծեսեր: Հարսանիքի նախորդ օրը հացաբխումն էր, որին պետք է անպայման ներկայանային քավորն ու նորափեսան՝ հացթուխին ու այդ գործի մյուս օժանդակ աշխատանք կատարողներին նյութական խրախուսամբ տալու նպատակով: Միայն դրանից հետո էր առաջին լավաշը հանվում

թոնրից: Բազմազուն ժապավեններով զարդարված մատու կենդանու մորթից հետո փեսացուի տնից հարսնացուի տուն միս, խմիչք, գաթա և այլ քաղցրեղեն էին ուղարկում: Իսկ ինչպե՞ս էին ընդունում հարսնացուին նոր տանը: Տղայի մայրը հարս ու փեսայի գլխին քաղցրեղեն, չոր մրգեր, ընկույզ էր թափում, նրանց ուներին փրփուր լավաշ գցում, գրավով մեղր ուտեցնում, մուտքի դռանը՝ ոտքերի տակ ջարդելու համար ափսեներ դնում և այլն: Շաբաթներ առաջ այս թեմայով Միսիանում գրուցակիցներից մեկը պատմեց, որ ոչ վաղ անցյալում սովորույթ կար հարսանիքի նախօրյակին նորափեսային իր նախնիների գերեզմանի մոտ պարեցնելը: Հավանաբար սա հեթանոսական սովորույթ է եղել, որի իմաստը կարելի է գուշակել: Իսկ այդ իմաստը հետեցելու է եղել՝ տոհմի անցավորներին հայտնել, որ նրանց տոհմը շարունակվում է և որ նրանց սերնդակիցների հերթական արական սեռի զավակը պատրաստ է նոր ընտանիք ստեղծելու, ասել է թե՛ սերունդը շարունակվելու:

Թվարկված սովորույթներից շատերն այսօր էլ մնում են, բայց քիչ չեն նաև այնպիսիները, որոնք մեր աչքի առաջ, նաև մեր ակտիվ մասնակցությամբ մահացան: Սյունիքի մարզում գյուղական հազվադեպ տուն կարելի էր գտնել առանց թոնրի: Հիմա հազվադեպ թոնրի կարելի է ծաբել, որտեղ վերջին 10 տարում գեթ մեկ անգամ հաց է թխվել, էլ չենք ասում, խոսում թոնրաճաշ կամ դափամա եփելու մասին:

Հազվադեպ անհատ կարող է ասել, թե համալսարանական կամ այլ կրթություն ստանալու տարիներին որ դասախոսությունից ինչ է սովորել, ստացել, դրանից ինչ է մնացել իր մեջ, բայց որ դրանք, ինչպես նաև նրա կրթության գործընդհանուր արդյունքները են իր՝ որպես անհատի, ձեռավորմանը՝ անժխտելի փաստ է: Անժխտելի փաստ է նաև այն, որ մարդու, հատկապես հայ մարդու ձեռավորման գործում նման ղեկավարություն է ունեցել և ունի թամադայությունը: Այն բանավոր բանախոսության ձեռք է, որին ցանկացած ոք չէ, որ կարող է տիրապետել, ինչպես, ասենք ցանկացած մարդ չէ, որ կարող է բանաստեղծ կամ վիպասան դառնալ, այն էլ լավ վիպասան կամ բանաստեղծ: Ասում են՝ ամենայն հայոց բանաստեղծ Հ.Թումանյանը ժողովրդի կողմից իրեն տված այս պատվանվան չափի հպարտացել է նույն ժողովրդի կողմից իրեն շնորհված մի այլ պատվանունով՝ ամենայն հայոց թամադա:

Թամադայության իմաստը (չեն վախենում հրապարակավ գործածել այս տերմինը) ունենալու փաստով շատ ժողովուրդներ չէ, որ կարող են հպարտանալ: Վրացական անեկտորի հայտնի հերոս Գիվիին դատապարտում են 10 տարվա ազատազրկման, իսկ պատիժը կրելուց հետո էլ, մինչև կյանքի վերջը նրան գրկում են ընտրելու և ընտրվելու իրավունքից, ծայնագուրկ են աճում: Վեր-

ջին խոսքում դատապարտյալը դատավորին հարցնում է՝ իսկ բանտից ազատվելուց հետո թամադա ընտրվելու իրավունք ունի՞: Հասկանալի է, պատասխանը դրական է, որը բավարարում է Գիվիին, մխիթարում նրան:

Մեր ամենօրյա խոսակցությունների մեջ արմատացած են «նրա հետ մի փուլ աղ ու հաց են կերել», «հացը պարտավորեցնում է», «նրա հետ հաց չեն կտրի», «հացը սուրբ է» և տասնյակ նման արտահայտություններ: Իսկ՝ գնանք մի կտոր հաց ուտենք կամ՝ հացի են հրավիրել արտահայտությունները ոչ ոք ուղղակի իմաստով չի հասկանում: Դրանք նախենառաջ նշանակում են սեղանի շուրջ մտել՝ ասել-խոսելու, իրար լսելու: Ոչ մի նման սեղան, եթե նրա շուրջ երկու-երեք հոգուց ավելի մարդ է նստում, առանց ղեկավարի, ասել է թե՛՝ առանց թամադայի չի լինում:

Բայց, ավաղ, մեր լավ սովորույթներից շատերը, կրկնում են, մոռացվում կամ դուրս են մղվում մեր նիստուկացին խորթ, օտարածին, արհեստական սովորույթների կողմից: Տղերիս հեղինակի համար ամենատիպ հնչողությունն ու բովանդակությունն ունի «դիջեյ» բառը: Ընթերցողներից շատերի համար էլ հավանաբար այդպես է: Այս օտարաբան բառն այնքան հզոր էր, որ կարճ ժամանակամիջոցում մուտք գործեց մեր փոքր երկրի նույնիսկ ամենապահպանողական տարածաշրջաններ և այնտեղից դուրս մղեց ոչ ավել ոչ պակաս «թամադայության» իմաստիտուրը: «Թամադայություն» բառը, ինչպես կասեր մեծ Չարեցը, դարձավ հնաբոյր:

Եթե մի քանի տարի առաջ որեւէ մեկն ասեր, թե թամադայություն անելու համար ինչ-որ մեկին վճարել են՝ կժպտայինք: Սեպտեմբերի կեսերին հանրային հեռուստատեսության առաջին ծրագրով հարցազրույց էր հարսանիքներ, ծնունդ-կնունքներ են նմանատիպ ուրախ հանդեսներ վարող-ղեկավարող մի կազմակերպության ներկայացուցիչների հետ: Ծրագրի հյուրերը սովորական մահկանացուներիս տեղյակ պահեցին, որ լավ հարսանիքների վրա ծախսվում է 50-60 մլն դրամ (բա՞), որից 1-1.5 մլն.-ը ստանում է դիջեյը (երկու անգամ՝ բա՞): Դե եթե պետական բարձրաստիճան չհնուվնիկն իր մեքենայի համար այսպես կոչված «գուր» համարանիշ ձեռք բերելու նպատակով վճարում է 8 մլն դրամ (նույն ծրագրով 19.09.15թ.), ապա դիջեյին 3-4 ժամվա «դաժան ու չարքաշ» աշխատանքի համար 1,5 մլն դրամ վճարվում չէր չի երեւում:

Ինքս ծայրահեղ ավանդապաշտ չեմ: Ավելին, նորը, առաջավորը միշտ էլ հրապարակ է ինձ: Բայց ամեն նոր չէ, որ օգտակար է, և ոչ էլ ժամանակությունն ստացած ցանկացած հինգ է այդպիսին (օգտակար): Նման ժամանակությունից օր առաջ ազատվելու օրակարգային խնդիր է: Բայց, դժբախտաբար, ձեռնարկվող կիսատ-պաշտ միջոցառումներն արդյունք չեն տալիս: Խոսքս թաղման որոշ ծիսակատարությունների մասին է:

Հայ գրականության վարպետներից մեկը՝ Ավ.Իսահակյանը, գյուղական կյանքին նվիրված մի պատմվածքում պատմում է, որ ամառային աշխատանքների ամենաթեթ պահին ծննդաբերելիս մահանում է գեղեցկուհի հարսը: Հարազատները թաղում ավարտելուց հետո համազրույցներից ներողություն են խնդրում, որ սգո սեղան չեն պատաստել, չեն ցանկացել նրանց կտրել աշխատանքից: Բայց նկատելով, որ իրենց ասածը միանշանակ չի ընդունվում համազրույցների կողմից, հավելում են, որ որոշել են սգո սեղանը պատրաստել դաշտային աշխատանքների ավարտից հե-

տո՝ աշնանը: Իսկ Ռաֆֆին էլ իր վավերագրական պատմվածքում պատմում է հետևյալը:

Արցախի հայտնի գյուղերից մեկում՝ Քարինտակում, ինչպես տարածաշրջանի մյուս գյուղերում, նման դժբախտության դեպքում հանգուցյալի հարազատները, անկախ իրենց նյութական վիճակից, պարտավորված են զգում բացել ուտելիքով և խմիչքով ծանրաբեռնված սգո սեղան: Գյուղացիներից շատերը, որոնք հիմնականում աղքատ մարդիկ էին, ստիպված են լինում տոկոսով փող պարտք անել մսացու, գինի և նման դեպքերի համար անհրաժեշտ այլ մթերքներ գնելու և իրենց հանգուցյալին առողջ-փառք հողին հանձնելու համար: Իսկ հետո՞: Հետո նրանք տասնյակ տարիներ աշխատում էին այդ պարտքը մարելու համար: Հիշյալ գյուղից սերված թիֆլիսաբնակ մեծահարուստ մի կին, որ ամեն ամառ գյուղ է գալիս հանգստանալու, որոշում է վերջ տալ այդ կործանարար սովորույթին: Այդ նպատակի համար որոշ գումար է տրամադրում տանուտեղին՝ պատվիրում ասիմանափակվել գերեզմանատանն այսպես ասած «թիքա տալով» և հանգուցյալի հոգու փրկության համար մի թաս գինի ըմպելով: Համագյուղացիների ընթերցում է նաև իր կտակը, որով խնդրում է իրեն նուրբակավորել գյուղի գերեզմանատանը և սահմանափակվել նույն ծիսակարգով: Համայնքն ականջալուր է լինում համազրույցի մեծապատիվ տիկնոջը և նրա հիմնած ավանդույթը մի քանի տարի պահպանվում է նաև նրա մահից հետո: Նրա շիրիմը դառնում է ուխտատեղի, բայց մի քանի տարի անց ամեն ինչ մոռացվում է, ամեն ինչ նորից վերադառնում է հին հուճը և շարունակվում մինչև հիմա:

Այս պրոբլեմը մեր ազգի մեծերին հուզել է 100-150 տարի առաջ: Իսկ ընտրված մեկուկես դարի ընթացքում: Համարյա ոչինչ: Ավելին: Ինչպես ընդունված է ասել, ունքը չի՞նելու փոխարեն աչքն էլ ենք հանել: Սյունիքի մարզի համարյա բոլոր բնակավայրերում նմանատիպ սեղանները քիչ բանով են տարբերվում հարսանեկան սեղաններից: Թերևս միայն կոնյակի ու խավիարի բացակայությամբ: Ցավալիքն այն է, որ արարողությունն ավարտվելուց հետո երբեմն մի քանի օր շարունակ այս ու այնտեղ քննարկում ենք, հաճախ թվարկելով այդ սեղաններին դրված ուտեստները, դրանց քանակն ու որակը, դրանք համեմատում այլ սգո սեղանների «բովանդակություն» հետ... գնահատական տալիս: Ցավալի է, անչափ ցավալի...

Մի քանի տարի է, ինչ մայրաքաղաք Երևանից «ստացել» են թաղմանը հաջորդող մյուս արարողությունների երկար շղթայի մեջ մի ծես էլ ենք ամրագրել: Խոսքը վերաբերում է 15-րդ, 40-րդ օրերին և տարելիցին գերեզման այցելելուց առաջ զուտ կանանց համար այսպես ասած խմորեղեն-քաղցրեղենով, մրգերով ծանրաբեռնված «սուրճի սեղան» բացելուն:

Մի քանի էլ. նկատե՞լ չք, որ մի քանի տարի է, ինչ գերեզմանատանը դամբանական խոսք ստղների մեջ ավելի հաճախակի են հանդիպում հանգուցյալի հետ բոլորովին կապ չունեցող, կիսազրույց, պաթետիկ տոնով, վարձավճարով խոսողներ: Հաճախ է պատահում, որ նրանք իրենց խոսքի մեջ մոռանում են հանգուցյալի կամ նրա մոտիկ հարազատների անունները, տարբերվելով: Ու նմանների փոխարեն լսողն է ամաչում: Նման բան լսող ու տեսնողի մտքով մի բան էլ է անցնում՝ չլինի՞՝ թե հիշեն նաև ողբասաց կա-

# Ավանդույթներ, սովորույթներ. ո՞րը պահպանել եւ որից ձերբազարվել

Մանց մասին: Ինչպես ասում են՝ աստված բեթարից փրկի:

Ճակատագրի բերումով ես, իմ հասակակիցների ճնշող մեծամասնությունը խորհրդային դաստիարակություն ենք ստացել, այսինքն՝ կրթվել եւ մեծացել ենք աթեիզմի պայմաններում, այսինքն՝ չենք հավատում Աստծո գոյությանը, որի համար անձամբ ես շատ եմ ավստում: Բայց հաճախ ենք ակամատես լինում, որ երեկվա աթեիստները մի գիշերվա մեջ փոխվել են մոլեռանդ հավատացյալների, անհրաժեշտության դեպքում, ընդգծում են, անհ-

րաժեշտության դեպքում, եկեղեցի են գնում, ակտիվորեն մասնակցում եկեղեցական ծեսերին, հաճախ էլ, իրենց կամքից անկախ դրանք վերածում զավեշտի, դրանով էլ հարվածում եկեղեցու եւ հենց իրենց հեղինակությանը:

Բարեկամս պատմեց հետեւյալը: Գյուղում հուղարկավորում են ընտանիքի 80 տարեկան հորը, որի մինուճար որդին մոտ քսան տարի առաջ մեկնել է Ռուսաստան, հաջողությամբ ինտեգրվել ռուսական միջավայրին, հարստացել: Զորքաղմանը չի կարողացել գալ, բայց անհրաժեշտ դրամական միջոցներ է

ուղարկել եւ քույրերին խիստ հանձնարարել, որ իրենց հորը վերջին հանգրվան ճանապարհելու գործում միջոցներ չխնայեն ու դա անեն Դայ առաքելական եկեղեցու կանոններով:

Թաղման ծեսին հրավիրում են նաեւ եկեղեցու սպասավորին:

Օգոստոս ամիսն է, օրը՝ կեսօր: Թաղման քափորը հասնում է հանգստարան: Տեր հայրը սկսում է թաղման ծեսը: Եկեղեցու սպասավորն իր պարտականությունները կատարում է բոլոր մանրամասնություններով: Արեւն այրում է: Թաղման մասնակիցներից շատերը, չկարողանալով մնալ ոտքի վրա, տեղավորվել են շիրմաքարերի վրա: Գյուղում հայտնի իմաստուն մի պապիկ, որ հանգուցյալի ընկերն էր, հեռացել ու նստել է գերեզմանոցի հատուկ նստի մեկի շվաքում, կանաչի վրա, հայացքով իր մոտ է կանչում բարեկամիս ու ասում՝ տեսա՞ր Սաքի դայու գլուխն ինչ բերին...

Չավեշտ չէ, բա ի՞նչ է...

ՌԵԴԻԿ ԳԱՅՐԱՊԵՏԱՆ

# «Հինավուրց Տանձափափ» եւ «Տոհմանուններ»

## Նայրենագիտություն

Վերջին ժամանակներս գրքեր են տպագրվում տարբեր բնակավայրերի մասին, կարծում ենք՝ մղունը միանգամայն բնական է. մոռացության մշուշից փրկել ծննդավայրին առնչվող դեմքեր, դեպքեր, իրադարձություններ:

**Տանձափափի Սուրեն Վարդանյանը**, ով խորհրդային տարիներին կոմերիտական ու կուսակցական ապարատում է աշխատել, իսկ անկախության տարիներին գործունեությունը շարունակել դատախազության համակարգում, իր հայրենի գյուղի պատմությունը սերունդներին հանձնելու նախանձախնդիրն է եւ ընթերցողի սեղանին է դրել «Հինավուրց Տանձափափ» գիրքը: Գրքի առաջին հրատարակությանը հետեւել են ընթերցողի բազմաթիվ արձագանքներ՝ մասնավոր հանդիպումների ժամանակ, հեռախոսազանգերով, հրապարակումներով: Այս տարում ընթերցողն ունեցավ գրքի երկրորդ, լրամշակված հրատարակությունը՝ տպագրված «Էդիտ Պրինտ» հրատարակչությունում: Գրքի առաջին հրատարակության մասին խոսք է գրել Գագիկ Գալստյանը, որը «Տանձափափի անձնագիրը» վերնագրով է «Գրախոսականի փոխաբեր» խորագրի տակ տպագրվել մեր թերթի 2014 թվականի հուլիսի 12-ի համարում:

Եվ սա դեռ ամենը չէ: Ս.Վարդանյանի հեղինակությամբ լույս է տեսել «Տոհմանուններ. Գորիսի տարածաշրջան» գրքույկը (Երևան, «Հեղինակային հրատարակություն», 2015): Այս վերջինը տարբերվում է գյուղական համայնքների մասին մինչ այժմ լույս տեսած գրքերից, քանզի այն բովանդակում է Գորիսի տարածաշրջանի բնակավայրերում պահպանված եւ բանավոր գործածվող տոհմանունները: Գրքույկի առաջին մասում տրվում են տեղեկություններ տոհմ հասկացության եւ Գորիսի տարածաշրջանի տոհմերի մասին: Հեղինակն այն եզրահանգման է եկել, որ տոհմերը, միանշանակորեն, գյուղական բնակավայրերում են ձեւավորվում, որ գյուղական տոհմին հատուկ են ներ-



սում համախմբված լինելը, հարազատական, մշտական ջերմությունն անհատների եւ ընտանիքների միջեւ, փոխադարձ վստահությունը, փոխօգնությունը եւ այլն: Հեղինակի համոզմամբ՝ տոհմերը հնարավորություն են տալիս հիշելու, պահպանելու եւ փոխանցելու նախնիների անունները, որոնցով կարելի է պատկերացում կազմել, թե հետավոր ժամանակներում անվանակոչման ինչպիսի առանձնահատկություններ են եղել եւ որքանով են եղել դրանք հայկական եւ այլն: Ներկայացված ամփոփ տեղեկանքից պարզ է դառնում, որ Գորիսի տարածաշրջանի 25 համայնքում հաշվվում է 972 տոհմ:

Մինչ գյուղի տոհմերը ներկայացնելը հեղինակը հակիրճ, բայց բնութագրական տեղեկություններ է ներկայացնում տվյալ համայնքի մասին, վկայակոչելով հինավուրց փաստեր, ներկայացնում բնակավայրի աշխարհագրական դիրքը, ճարտարապետական հուշարձանները, տալիս ծագումնաբանությունը, երբեմն հղում անում պատմիչներին՝ Ստեփանոս Օրբելյան, Առաքել Դավրիժեցի եւ այլն: Հիշատակվում են տոհմերի երեւելի ներկայացուցիչների անուններ:

Մնում է ավելացնել, որ երկու գիրքն էլ ունի հայրենագիտական արժեք: «Տոհմանուններ» ստեղծմանն աջակցել են համայնքների ղեկավարներ, մտավորականներ: Հեղինակը նաեւ երախտագիտություն է հայտնել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Սուրեն Զոբոսյանին, գրքույկի խմբագիր Վլադիմիր Զաղայանին, Արմիկ Բակունցին:

ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

[www.arantsk.am](http://www.arantsk.am)

## ԱՌԱՆՅՔ

«Առանցք» ընկերությունն սպառողին է առաջարկում տանիքների համար նախատեսված բարձրորակ արտադրության ցինկապատ, գունավոր լաքաներով ծալքաթիթեղներ, կղմինդրներ, գիպակարտոնի պրոֆիլներ, եվրո դուռ-պատուհանների պրոֆիլներ, ցանցեր: Ինչպես նաեւ մետաղական գլանվածքներ՝ սեւ թիթեղներ, մետաղական կլոր եւ քառանկյուն խողովակներ, ձողեր, շվեկերներ, երկտավեր, ամրան, ամրալար եւ մի շարք այլ ապրանքատեսականի:

Իսանուր: Զ.Երեւան, Արշակունյաց 252  
 (+374 10) 44 64 84  
 (094) 44 64 84

Գործարան: Զ.Երեւան, Նորազավիթ 1/1  
 (+374 10) 44 11 22  
 (043) 44 11 22

**ՎԱՆԱՎՈՒՄ Է Զ.ՎԱՊԱՆ - 1995թ. Mercedes-Benz C200 սեղան:** Տեղադրված է 2.0 գազ: Վազը՝ 150,000 կմ = փ.տ.՝ ավտոմատ = արժաթագույն մետաղիկ = ղեկը՝ ձախ = շարժիչը՝ 2.0 = ձիաուժ՝ 136 = անվահեծ՝ 15՝: Զանգահարել՝ (093) 89 63 84 հեռախոսահամարով:

## Այունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ  
**«ՍՅՈՒՆՅԱՍ ԱՆԵՍԱՐԳ»**  
 ՍԱՀՄԱՆՈՒԿ ՊՆՍԱՍՆԱՏՎՈՒԹՅԱՒ ԸՆՎԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝  
**ՍԱՏՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:  
 Հեռ.՝ (0285) 5 25 63,  
 (091) 45 90 47,  
 (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru  
 Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր փճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴԻ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ ՕՄՄ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական աջակցություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրանակը՝ 1700, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 09.12.2015թ.: